



## ՄԵՐ ԱՆԿԻՆԵՆ

### Երբ Լրագրողները կը Կոչեն «Ժողովուրդի Թշնամի»

Երեք շաբաթներ առաջ Սեուտցի յայտնի լրագրող ու յօդուածագիր Ժամալ Խաչըքճի մուտք գործեց Իսթանպուլի Սեուտական Արաբիոյ հիւպատոսարանը, իր սպասուող ամուսնութեան հետ կապուած փաստաթուղթեր դասաւորելու համար: Խաչըքճի անգամ մըն ալ դուրս չեկաւ հիւպատոսարանի շէնքէն: Երբ թրքական աղբիւրները սկսան տարածել անոր սարսափազդու ձեռնարկը, աշխարհի ուշադրութիւնը կեդրոնացաւ այս հարցին վրայ ու կը շարունակէ մնալ այդպէս: Սեուտական կառավարութիւնը նախ հերքել է ետք ժամալ Խաչըքճի «անհետացման» հետ որեւէ առնչութիւն ունենալը, վերջապէս եկաւ յայտարարելու թէ, ան «սխալմամբ սպանուած է»:

Նշանաւոր լրագրողի ողբերգական մահը եկաւ նաեւ ուշադրութիւն սեւեռելու երկու այլ երկիրներու ղեկավարներուն վրայ:

Առաջինը Թուրքիոյ նախագահ Էրտողանն է, որ այս դէպքը կ'օգտագործէ Սեուտական Արաբիոյ հետ իր ունեցած տարածաշրջանային հարցերը լուծելու համար: Ան ոչ թէ մտահոգ է լրագրողի մը ճակատագրով, այլ կը փորձէ հանրային կարծիքին ներկայանալ որպէս այդպիսին: Բոլորին ծանօթ է, որ Թուրքիոյ մէջ լայնածաւալ հալածանք շրթայագերծուած է Էրտողանին ընդդիմադիր թերթերու եւ լրագրողներու դէմ: Ներկայիս թրքական բանտերը լեցուած են հարիւրաւոր լրագրողներով:

Երկրորդը՝ Ամերիկայի նախագահ Տոմալտ Թրամփի վերաբերմունքն է մամուլի նկատմամբ: Ան ոչ միայն «սուտ լուր» կը կոչէ, մամուլի բոլոր այն հրապարակումները, որոնք իրեն համար հաճելի չեն, այլ քայլ մը առաջ երթալով ու օգտագործելով ստալինեան բառապաշար, Ամերիկացի յայտնի լրագրողները հրապարակաւ կ'անուանէ «ժողովուրդի թշնամիներ», զանոնք արժանացնելով իր ծայրայեղ համակիրներու պարսաւանքին ու վտանգելով անոնց կեանքը:

Անցեալին, Ամերիկան օրինակ կը ծառայէր աշխարհին՝ որպէս մամուլի ազատութեան պաշտպան երկիր: Թրամփի նախագահութեան շրջանին չափանիշերը շրջուած են ու Ամերիկայի ղեկավարը ճիշդ հակառակ օրինակը կու տայ այլ երկիրներու բռնապետներուն:

Ծիշդ է որ, Միացեալ Նահանգներու մէջ լրագրողները պետական հալածանքի չեն ենթարկուիր, շնորհիւ այս երկրէն մերս գոյութիւն ունեցող ամուրի հաստատութիւններուն, սակայն Թրամփի լրագրողները կոչելով «ժողովուրդի Թշնամի», կը վտանգէ ժամալ Խաչըքճիներու կեանքը ամենուրեք:

«ՄԱՍԻՍ»

## Հայաստանի Ազգային Ժողովը Տապալեց Ընտրական Օրինագիծի Առաջարկուող Փոփոխութիւնները

Հոկտեմբեր 21-ին, Հայաստանի Ազգային Ժողովէն ներս տեղի ունեցած է կառավարութեան կողմէ առաջարկուած ընտրական նոր օրինագիծի քննարկումը, որու աւարտին կարելի չէ եղած ապահովել անհրաժեշտ քանակութեամբ ձայներ ու տապալուած է Նիկոլ Փաշինեանի առաջնահերթութիւններէն մէկը:

«Ազգային Ժողովում տեղի ունեցած քուէարկութեամբ տապալուեցին Ընտրական օրէնսգրքում կառավարութեան առաջարկած փոփոխութիւնները», - այս մասին ֆէյսպուքեան ուղիղ եթերի ժամանակ յայտարարած է ՀՀ վարչապետի պաշտօնակատար Նիկոլ Փաշինեանը եւ աւելցուցած. «Ընդ որում, հարկ եմ համարում նշել, որ առաջարկուող փոփոխութիւնները ԸՕ-ն առաւել ժողովրդավարական, աւելի պարզ դարձնելու նպատակ ունէր եւ ժողովրդի ընտրութիւնը հեշտացնելու խնդիր ունէր»:

Փաշինեանի գնահատականով այս քուէարկութեամբ ԱԺ-ն եւս մէկ անգամ ի ցոյց տուաւ, որ



Խորհրդարանի դահլիճը ընտրական օրինագծի քննարկման ընթացքին

խորհրդարանական արտահերթ ընտրութիւնները անխուսափելի են: «Ըստ հուլիսեան, այսօրուայ քուէարկութիւնը ցոյց տուեց իրերի իրական դրութիւնը, երբ խորհրդարանական մեծամասնութիւնը եւ նրա կողմնակիցներն ամէն ինչ անում են սապօթածի քաղաքական

նութիւն վարելու համար, որը վերջին 20 օրուայ ընթացքում մի քանի անգամ ակնյայտ երեւաց: Նրանք յուս ունեն, որ այս ճանապարհով խորհրդարանական արտահերթ ընտրութիւնները կը կանգնեն սապօթածի քաղաքական

Շար.ը էջ 6

## Լոս Անճելոսի Մէջ Մեծ Շուքով Նշուեցաւ Ամերիկայի Հայ Աւետարանչական Ընկերակցութեան 100-Ամեայ Յօրեւեանը

Շաբաթ, Հոկտեմբեր 20-ի երեկոյեան, Լոս Անճելոսի «Միլլանիում Պալէսթրա» հիւրանոցի սրահներէն ներս մեծ շուքով նշուեցաւ Ամերիկայի Հայ Աւետարանչական Ընկերակցութեան հիմնադրութեան 100-ամեայ յօրեւեանը:

Պատմական հիւրանոցէն ներս տեղի ունեցած շքեղ ճաշկերուցիին ներկայ էին Հայ Աւետարանչական Ընկերակցութեան ղեկավարներ, տարբեր երկիրներէ ժամանած Աւետարանական համայնքի հոգեւոր սովորներ եւ առաջնորդներ, Ընկերակցութեան բարերարներ եւ մեծ թիւով հայեր տարբեր քաղաքներէ ու համայնքներէ:

Ներկայ էին նաեւ Արեւմտեան թեմի առաջնորդ Յովնան Արք. Տէրտէրեան եւ Հայաստանի Հանրապետութեան Լոս Անճելոսի գլխաւոր հիւպատոս Պր. Արմէն Պալաւրթեան:

Երեկոն սկսաւ Միացեալ Նահանգներու եւ Հայաստանի քայլերգներու յոտնկայս ունկնդրութեամբ, որմէ ետք վերապատուելի Պերճ Ճամպազեան կատարեց բացման աղօթքը:

Օրուայ հանդիսավար, Ամերիկահայ յայտնի քաղաքական գործիչ՝ Քէն Քաչիկեանի բացման խօսքէն ետք ելոյթ ունեցաւ Ամերիկայի Հայ Աւետարանչական Ընկերակցութեան նախագահ Տոքթ. Նազարէթ Տարազեան, որ անդրադարձաւ Ընկերակցութեան կարեւոր առաքելութեան՝ Հայ Ժողովուրդի հոգեւոր, կրթական ու



Ընդհանուր տեսարան մը ճաշկերուցի սրահէն Photo by Sahag Melelian

բարեսիրական կեանքէն ներս: Ապա, ան յատուկ գնահատանքի արժանացուց Ընկերակցութեան նախկին գործադիր տնօրէն Պր. Լեւոն Ֆիլեանին՝ հանգստեան կոչուելուն առթիւ: Այս առթիւ անոր յանձնուեցաւ յատուկ յուշանուէր:

Տօքթ. Տարազեան նաեւ պարգեւատրեց Տիկին Ճոյս Սթալինին, որ շարունակելով իր հօր՝ Ստեփան Փիլիպոսեանի աւանդը երկար տարիներէ ի իվեր սատար կը կանգնի Ամերիկայի Հայ Աւետարանչական Ընկերակցութեան:

Տեսարանի միջոցաւ ներկայացուեցաւ Ընկերակցութեան 100-ամեան բեղուն գործունէութիւնը սփիւռքի ամբողջ տարածքին ու

նաեւ Հայաստանի ու Արցախի մէջ: Բարձրորակ կատարողութեամբ հանդէս եկան Կրէկ Հոշարեան եւ Հայկական երաժշտական անսամպլի արուեստագէտները:

Երեկոյի ընթացքին յատուկ պատիւի արժանացան Ընկերակցութեան երկարամեայ բարերարները, որոնց կտակներուն շնորհիւ կարելի եղած է լայնածաւալ աշխատանք իրականացնել Հայ Ժողովուրդի կեանքէն ներս:

Պր. Քէնէթ Գէորգեան ներկայացուց Գոնթի եւ Ստեփան Փիլիպոսեան հիմնադրամի ներդրումը, Տիկին Էլիզաբէթ Աղապաեան

Շար.ը էջ 6



# ՎԱՅԱՍԱՆԵԱՆ ՄԱՍԻՍ

## Ոչ Թե Հակայեղափոխութիւն, Այլ՝ Յեղափոխութեան Եզրափակում Ինչու է Վրիպում Նիկոլ Փաշինեանը

ՍԱՐԳԻՍ ԱՐԾՐՈՒՆԻ

Մինչեւ խորհրդարանի այսօրուայ արտահերթ նիստը որոշակի կարծիք էր ձեւաւորուել, որ ԸՕ-ի առաջարկուող փոփոխութիւնները, մասնաւորապէս այն դրոյթը, որով խորհրդարանում պարտադիր էր համարուում չորրորդ խմբակցութեան առկայութիւնը՝ նոյնիսկ 2%-անոց շէմը յաղթահարելու միջոցով, արւում է Նիկոլ Փաշինեանի թիմի ու ՀՀԿ պայմանաւորուածութիւնների համատեքստում՝ վերջինիս մուտքն ապագայ խորհրդարանի ապահովելու նպատակով: Յամենայնդէպս, դա կարող էր տեղաւորուել Նիկոլ Փաշինեանի հռչակած ներքաղաքական ուղերձի համատեքստում, որով տրուում էր բարեկազմների ապամոնտաժման սկիզբը:

Ազգային ժողովն այսօր առաջին ընթացքում քի ընդունել «Հայաստանի Հանրապետութեան ընտրական օրէնագիրք» Հայաստանի Հանրապետութեան սահմանադրական օրէնքում լրացումներ եւ փոփոխութիւններ կատարելու մասին նախագիծը: Կողմ էր 56 պատգամաւոր, 3-ը դէմ էին: Օրէնքը սահմանադրական է եւ հարկաւոր էր պատգամաւորների ընդհանուր թուի առնվազն 3/5-ի քուէն՝ 63 ձայն: Ըստ այդմ՝ Փաշինեանի թիմի ու ՀՀԿ-ի միջեւ պայմանաւորուածութիւնների վարկածը յղու ցնդեց, կամ էլ՝ կողմերից մէկը բաւարարուած է պայմանաւորուածութիւնների մակարդակով, այլ խօսքով՝ ստատուս-քվոն փոխելու խնդիր ունի: Այն բանից յետոյ, երբ Ազգային ժողովը տապալել է կա-

ռավարութեան ներկայացրած Ընտրական օրէնագիրքի բարեփոխումների փաթեթի ընդունումը, վարչապետի պաշտօնակատար Նիկոլ Փաշինեանը հանդէս է եկել Ֆէյսբուքեան ուղիղ հեռարձակմամբ եւ յայտարարել, որ Հանրապետական կուսակցութիւնը եւ նրա կողմնակիցներն ամէն ինչ անում են «սաբոտաժի քաղաքականութիւն վարելու համար»:

Եթէ իրերը կոչենք իրենց անուններով, ապա այսօր տեղի ունեցածը դժուար է սաբոտաժ համարելը՝ բառի դասական իմաստով: Եթէ անգամ ՀՀԿ-ին յաջողուի վիժեցնել խորհրդարանի բոլոր նիստերն ու քուէարկութիւնները, արտահերթ ընտրութիւնների գործընթացը վիժեցնել այլեւս հնարաւոր չէ. գործընթացի մեկնարկն արդէն տրուած է, ու տեսանելի չէ հակայեղափոխութեան ռեանչի անգամ տեսական հնարաւորութիւն, որովհետեւ նման գործընթացի համար նախատեսուած գործիքը՝ խորհրդարանական նախկին մեծամասնութիւնն, ըստ էութեան, կազմաքանդուած է ու նախկին համակարգի որեւէ ներկայացուցիչ չի կարող կենտրոնախոյս սեզմենտներին կոնսոլիդացնելու խնդիր լուծել: Էլ չենք ասում հասարակական դիմադրութիւնը յաղթահարելու անհնարինութեան մասին:

Ուրեմն՝ արտահերթ ընտրութիւններ տեղի է ունենալու ցանկացած պարագայում, նոյնիսկ՝ վատ ԸՕ-ով կամ դրա բացակայութեամբ: Կապանի երէկուայ ընտրութիւններում ՔՊ-ի թեկնածուի պարտութեան ու խորհրդարանում ՀՀԿ այսօրուայ վարքագծի մէջ

կապ փնտուելը, մեղմ ասած, դուրս է իրական քաղաքականութեան ռեժիմից: Նախ՝ Կապանում տեղի ունեցածը լոկալ դրսեւորում է՝ անկախ այն հանգամանքից, որ դրա հիմքում տեսանելի է իշխանութեան անարդիւնաւետութեան դրսեւորումը: Սակայն, եթէ նոյնիսկ ընդունենք, որ իշխանութեանը չի յաջողուել ստեղծել աւելի կենսունակ համակարգ, դա աւտոմատ չի մեծացնում ռեստավրացիայի հնարաւորութիւնը՝ դրա համար քաղաքական գործօնների ակնյայտ բացակայութեան հետեւանքով:

Այլ խնդիր է, որ յեղափոխական կառավարութեան վարքագծում տեսանելի են ինստիտուցիոնալ ճգնաժամի որոշակի դրսեւորումներ եւ ռիսկերի սխալ գնահատում, ինչը կարող է հանգեցնել ֆորսմաժօրային իրավիճակների: Երեւանի աւագանու ընտրութիւններից յետոյ Փաշինեանի թիմը որոշակիօրէն կորցրել է քաղաքական աղեկատեսութիւնը, ինչը բերում է սխալ հաշուարկներին: 80%-ը ոչ թէ Նիկոլ Փաշինեանի ու նրա թիմի իրական վարկանիշն է, այլ հակայեղափոխութիւնը մերժելու հանրային կոնսոլիդացուած դիրքորոշման արտայայտութիւնը: Սակայն դա ինքնին չի ենթադրում, որ Փաշինեանն ու նրա թիմը գործողութիւններ պէտք է իրականացնեն կամ ծրագրեր մշակեն 80%-ի ելակետից: Այլ խօսքով՝ մեծ են բարձր նշաձողեր սահմանելու ու դրանք տապալելու ռիսկերը: Օրինակ, երբ խօսուում է բարեկազմների ապամոնտաժման մասին, սակայն այդ կուրսն իրականացում է անհասկանալի կադրային քաղա-

քականութեան ուղերձով, ապա հասարակութիւնը կարող է ոչ միայն չծափահարել վարչապետին, այլ հակադարձել նրան՝ ինչպէս արեցին կապանցիները:

Հիմա Փաշինեանը պէտք է վերանայի ոչ թէ ռացիոնալ քաղաքական ուղերձը, այլ՝ իր մարտավարութիւնը: Նոյնը վերաբերում է այսօրուայ խորհրդարանական իրադարձութիւններին: Երբ Նիկոլ Փաշինեանը Հոկտեմբերի 2-ին կապիտուլացրեց խորհրդարանը, ապա դրանից յետոյ լուրջ էջը ակնկալել, որ դէ ֆակտո արձակուած Աժ-ի խորհրդարանական կուսակցութիւնների հետ համախոհութեան սկզբունքով հնարաւոր է ԸՕ բարեփոխել: Ընտրական օրէնագիրքի տապալման մեղաւորը ոչ միայն ՀՀԿ-ն ու «Թեթեակի» սաբոտաժ արած ԲՀԿ-ն ու ՀՅԴ-ն են, այլեւ գործադիր իշխանութիւնը վարչապետին առնթրէր ընտրական օրենսդրութեան բարեփոխումների յանձնաժողովի քարտուղար Դանիէլ Իոսանիսեանը:

«Մասնաւորապէս, Նիկոլ Փաշինեանը, ընտրութիւնների ժամկէտներն անապասելիօրէն Դեկտեմբեր բերելով, հապէս մեծացրեց սաբոտաժի հնարաւորութիւնը: Ընտրութիւններից առաջ ընտրական օրէնագիրքի բարեփոխումը Նիկոլ Փաշինեանի առանցքային խոստումներից էր, եւ չէր կարելի օրէնագիրքը չփոխած սկսել ընտրութիւնների պրոցեսը: Այդ դէպքում Աժ-ի վրայ հանրային ճնշման հնարաւորութիւն կ'ունենայինք, եթէ սենց սաբոտաժ արուէր», - գրել է Իոսանիսեանը ու, նա միանգամայն ճիշտ է: Գործ ունենենք ոչ թէ հակայեղափոխական ռեանչի, այլ յեղափոխութեան թիմի ինստիտուցիոնալ առաջին ճգնաժամի հետ, որն առայժմ յաղթահարելի է, քանի դեռ կայ հանրային վստահութեան մեծ պաշար:

«ԱՌԱՋԻՆ ԼՐԱՏՈՒԱԿԱՆ»

## Իրավիճակը Լրջանում է. Ինչու էր Դողում Աշոտեանի Ձայնը

Այսօր Ազգային ժողովում տապալուեց Ընտրական նոր օրէնագիրքը: Այն անհրաժեշտ ձայներ չհաւաքեց ոչ միայն ՀՀԿ-ի, այլեւ օրէնագիրքի ընդունմանը կողմ արտայայտուած ԲՀԿ-ի ու ՀՅԴ-ի չքուէարկած պատգամաւորների «շնորհիւ»: Առաջին փոխվարչապետ Արարատ Միրզոյեանը Ֆէյսբուքում գրեց, որ «որոշ ուժեր գործընթացը վերածեցին մկաններ ցուցադրութեան՝ հերթական անգամ դառնալով մեր երկրի զարգացման խոչընդոտ եւ հերթական անգամ մեր երկիրը դարձնելով իրենց, թոյլ տուէք ասել, անիմաստ տուայտանքի գերին»: Իսկ վարչապետ Նիկոլ Փաշինեանը յայտարարեց, որ սա սաբոտաժ է կառավարութեան դէմ, որի նպատակը արտահերթ ընտրութիւնը տապալելով ռեանչի հասնելն է, հանրութեանը կոչ անելով պատրաստ լինել գործողութիւնների:

Սաբոտաժը լուրջ մեղադրանք է, քանի որ դա պետական յանցագործութիւն է: ՀՀԿ-ի ու նրա սատելիտների՝ ԲՀԿ-ի ու ՀՅԴ-ի «ակտիւում» արդէն իսկ կայ պետական յանցագործութիւն՝ իշխանութեան իւրացմանը մասնակցութիւնը տարբեր համապետական ընտրութիւններում:

Կառավարութիւնը չի բացառում, որ մօտ օրերս կը նախաձեռնի Աժ արտահերթ նիստ օրէնագիրքն ընդունելու համար: Ըստ էութեան, խորհրդարանում կան անհրաժեշտ թուով պատգամաւորներ՝ 63 հոգի, ովքեր տեսականում

կարող են կողմ քուէարկել, եւ չի բացառում, որ այս ուղղութեամբ աշխատանք կատարուի:

Մինչ այդ, հետաքրքիր օրինաչափութիւն է նկատուում. կառավարութեան սիրոյ ու համերաշխութեան տրամաբանութեամբ քայլերն անցնում են երկրորդ փորձից, ուժ ցուցադրելուց յետոյ: Նիկոլ Փաշինեանը վարչապետ ընտրուեց երկրորդ փորձից, Մայիսի 8-ին, այն բանից յետոյ, երբ Մայիսի 1-ին ՀՀԿ-ն չապահովեց անհրաժեշտ թուով ձայներ, իսկ փողոցներում ցուցարարների թիւը բազմապատկուեց:

«Հակայեղափոխութեան» երկրորդ փորձը Հոկտեմբերի 2-ի քուէարկութիւնն էր, որից յետոյ Նիկոլ Փաշինեանը տասնեակ հազարաւոր մարդկանց ուղեկցութեամբ մտաւ Ազգային ժողով եւ յաջորդ օրերին խորհրդարանական ուժերը համաձայնուեցին Դեկտեմբերին արտահերթ ընտրութեանը:

Հետաքրքիր է, ինչ տեղի կ'ունենայ խորհրդարանում, եթէ կա-

ռավարութիւնը կրկին Ընտրական օրէնագիրքը ներկայացնի Աժ քննարկմանը: Եւ արդեօք այդ ընթացքում կը լինեն ուժային որոշակի գործողութիւններ:

ՀՀԿ-ի պահուածքը գնալով աւելի խղճուկ է դառնում: Այսօր կուսակցութեան պատասխանատուները փորձում էին ինչ որ հիմնաւորումներ բերել, թէ ինչու են դէմ նոր Ընտրական օրէնագիրքին: Դրանք համոզիչ չէին, փոխարէն ինչ ասես արժէր Արմէն Աշոտեանի ելույթը: Սովորաբար ինքնավստահ ու սահուն խօսող Աշոտեանի ձայնը թէ Աժ ամբիոնից, թէ լրագրողների հետ զրոյցում պարզապէս դողում էր:

Այդպէս կարող է լինել միայն ներքին՝ անհատական ու կոլեկտիւ մակարդակում, հակասութեան պարագայում, երբ արդէն կամ չգիտեն ինչ անել, կամ կատարում են իրենց կամքին հակառակ քայլեր, բարդացնելով ոչ միայն իրենց, այլեւ հանրային-պետական իրավիճակը, մտնելով նոր մեղքի ու պատասխանատուութեան տակ:

«ԼՐԱԳԻՐ»

**ՎԱՐՁՈՒ ՄՐԱՇ**  
**ՓԱՍԱՏԻՆԱՅԻ ՄԷՋ (200 ՀՈԳԻՒ ՎԱՍԱՐ)**  
**ԱՄԵՆ ՏԵՍԱԿ ԱՌԻԹՆԵՐՈՒ ՎԱՍԱՐ**  
**1060 N. ALLEN AVE. PASADENA CA 91104**  
**ՇԵՆԱԶԱՅՆԵԼ (626) 797-7680**

**ՄԱՍԻՍ**  
 ՇԱԲԱԹԱԹԵՐԹ  
**ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ**  
 ՊԱՇՏՏՈՍԱԹԵՐԹ՝  
 ՍՈՑԻԱԼ ԴԵՄՈԿՐԱՏ ՀՆՁՍԱԿԵԱՆ  
 ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ  
 Արեւմտեան Ամերիկայի Շրջանի  
 ՎԱՐԻՉ ՏՆՕՐԵՆ  
 ՎԱՐԵ ԱՏԱՊԱՐԵԱՆ  
**MASSIS Weekly**  
 Organ of the Armenian Social  
 Democratic Hunchakian Party  
 of Western USA  
 1060 N. Allen Ave.  
 Pasadena, CA 91104  
 Phone: (626) 797-7680  
 Fax: (626) 797-6863  
 E-Mail: massis2@earthlink.net  
 http://www.massisweekly.com  
 (USPS 667-310) (ISSN 0744-334X)  
 Published Weekly  
 Except Two Weeks in August  
**ANNUAL SUBSCRIPTION RATES:**  
 USA \$50.00, \$100.00 (First Class)  
 Canada \$125.00 (Air Mail)  
 Overseas \$250.00 (Air Mail).  
 All payments must be made in  
 US funds & Drawn on US banks.  
 Periodicals Postage Paid  
 at Pasadena CA.  
 Please Send Address Change To  
**MASSIS WEEKLY**

ՀԱՅԱՍՏԱՆԵԱՆ ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Կառավարութիւնը, «Պարտաւոր է Մինչեւ Աժ Արտահերթ Ընտրութիւնները Կեանքի Կոչել ԸՕ Փոփոխութիւնները»

Ըստ վարչապետին առնթեր ընտրական բարեփոխումներու յանձնաժողովի նախագահ Դանիէլ Իոաննեսեանի, կառավարութիւնը պարտաւոր է նախքան արտահերթ ընտրութիւնները կեանքի կոչել Ընտրական օրէնսգիրքի փոփոխութիւնները:



Ընտրական բարեփոխումներու յանձնաժողովի նախագահ Դանիէլ Իոաննեսեան

«Յեղափոխութեան քայլերը հետեւեալն էին՝ ընտրուում է ժողովրդի վստահութիւնը վայելող կառավարութիւն, բարեփոխուում է Ընտրական օրէնսգիրքն ու «Կուսակցութիւնների մասին» օրէնքը, աչուհետեւ լինում են արտահերթ ընտրութիւններ: Եւ այս մասով կառավարութիւնը պարտաւոր է յեղափոխութեան քայլերի հերթականութիւնը չփոխել: Եւ պարտաւոր է նարաւորութիւնների սահմանում անել ամէնը, որպէսզի դա արուի», - նշած է Իոաննեսեանը:

Դանիէլ Իոաննեսեանի խօսքով, իշխանութիւնները օրէնքը բարեփոխելու համար պէտք է օգտուին օրէնքով չարգիլուած բոլոր միջոցներէն. - «Եթէ կարիքը կայ

դրա համար ցոյցեր կազմակերպելու, ապա պէտք է դրա համար ցոյցեր կազմակերպել: Բայց յեղափոխութեան հերթականութեան փոփոխումը եւ այդ խոստումից հետ կանգնումը անընդունելի է: Եւ ես յոսով եմ, որ կառավարութիւնը այդպէս էլ կը վարուի»:

«Ելք»-ը Կարչապետի Պաշտօնին Առաջադրեց Նիկոլ Փաշինեանի Թեկնածութիւնը

Ազգային ժողովի «Ելք» խմբակցութիւնը որոշած է Նիկոլ Փաշինեանի թեկնածութիւնը առաջադրել Հայաստանի Հանրապետութեան վարչապետի պաշտօնին: Այս մասին լրագրողներուն յայտնած է Ազգային ժողովի «Ելք» խմբակցութեան պատգամաւոր Գէորգ Գորգիսեանը:

«Իրաւաբաններու հետ խորհրդակցութեան արդիւնքով որոշե-

ցինք վարչապետի թեկնածու առաջադրել», - ըսած է Գորգիսեանը:

Անոր խօսքով՝ նման որոշում առած են իրաւական գործընթացը ապահովելու համար:

ՀՀ վարչապետի ընտրութիւնը Աժ-ի մէջ տեղի պիտի ունենայ 24 նոյեմբերին: Այլ խմբակցութիւններէ դեռ թեկնածու չեն առաջադրած:

Փաշինեանի Կուսակցութիւնը Պարտուեցաւ Կապանի մէջ, Յաղթեց Այլ Քաղաքներու մէջ

Հոկտեմբեր 21-ին Հայաստանի տարբեր համայնքներուն մէջ տեղի ունեցան տեղական արտահերթ ընտրութիւններ իրականացուած են ինը մարզի քառասունինը համայնքի մէջ:

Ընտրութիւններ կայացած են նաեւ չորս խոշոր քաղաքներու՝ էջմիածին, Արմաւիր, Հրազդան, Կապան:

Արմաւիրի մարզի քաղաքներուն մէջ՝ Արմաւիրի եւ էջմիածինի մէջ յաղթած են Քաղաքացիական պայմանագիրի» թեկնածուները:

էջմիածինի մէջ քաղաքապետ ընտրուած է Նիկոլ Փաշինեանի գլխաւորած «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցութեան կողմէ առաջադրուած Տիանա Գասպարեանը. ըստ նախնական տուեալներու Հայաստանի առաջին ընտրուած կին քաղաքապետը ստացած է 8076 ձայն: Երկրորդ տեղը գրաւած է Սուրէն Մուրատեանը՝ 3699 ձայնով: էջմիածինի քաղաքապետի ընտրութիւններուն ցած մասնակցութիւն գրանցուած է. ընտրութիւններուն մասնակցած է 45278 ընտրողներէ ն 15826-ը, ինչը կը կազմէ ընտրողներու 34,95 տոկոսը:

Արմաւիրի մարզի Արմաւիր համայնքին մէջ քաղաքապետ ընտրուած է «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցութեան առաջադրած թեկնածու Դաւիթ Խոնդարթեանը: Նախնական տուեալներով ՔՊ-ական թեկնածուի օգտին քուէարկած է 6693 ընտրող: Երկրորդ

տեղը գրաւած է Օհան Յարութիւնեանը՝ հաւաքած է 1626 ձայն, իսկ երրորդը՝ Սեւակ Մինասեանը՝ 1288 ձայնով: Արմաւիրի մէջ կայացած քաղաքապետի արտահերթ ընտրութիւններուն 26 հազար 36 ընտրողէն մասնակցած է ընդամենը 8 հազար 969-ը:

Կոտայքի մարզի Հրազդան քաղաքին մէջ քաղաքապետ ընտրուած է ինքնաառաջադրուած թեկնածու Սեւակ Միքայէլեանը, որ Ազգային ժողովի «Ելք» խմբակցութեան պատգամաւոր Սասուն Միքայէլեանի որդին է: Նախնական տուեալներով ան ստացած է 10 681 քուէ, իսկ անոր միակ մրցակիցը՝ Լեւոն Ստեփանեանը՝ 4819 քուէ: Սեւակ Միքայէլեանը «քաղաքացիական պայմանագիր» կուսակցութեան անդամ է, սակայն կուսակցութիւնը յայտարարած էր, որ Հրազդանի քաղաքապետի թեկնածու պիտի չառաջադրէ եւ պիտի չսատարէ որեւէ թեկնածուի:

Կապանի մէջ անկուսակցական Գէորգ Փարսեանը յաղթած է «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցութեան կողմէ առաջադրուած թեկնածու Նարեկ Պապայեանին: Ըստ նախնական տուեալներու Գէորգ Փարսեանը ստացած է 10507 ձայն, Նարեկ Պապայեանը՝ 8499 ձայն: Կապան խոշորացուած համայնքին մէջ գրանցուած 34969 ընտրողէն քուէարկութեան մասնակցած է 19503-ը, որ կը կազմէ ընտրողներու 55.77 տոկոսը:

ՄԴՀԿ Կը Դատապարտէ Դեսպան Սիլսի Յայտարարութիւնը

ԱՄՆ դեսպան Սիլսի այն յայտարարութեանը, որ Հայաստանը (Արցախը ներառեալ) պարտաւոր է «գրաւեալ» «տարածք» զիջել յանուն խաղաղութեան՝ պատասխանում ենք:

-Հայաստանում «տարածք»-ներ չկան, կայ միայն հայրենիք, իսկ հայրենիքները չեն գրաւուում, նրանք ազատագրուում են:

ԱՄՆ-ի պետական շահերը սպասարկող դիւանագէտը դժուարութեամբ կրնա լինի մեր դիրքորոշումը, քանզի մեզ համար հայրենիքը ոչ վիետնամն է ԱՄՆ բանակի համար, ոչ իրաքը եւ ոչ Լիբիան: Եւ երբ ոչ հեռու անցեալում, տարիներ առաջ հայ ազգի նկատմամբ թոյլ տրուած խտրականութիւնների ու ազգային ճնշումների արդիւնքում եւ ոչ մի դիւանագէտ չարձագանքեց մեր հոգսերին, մենք ըմբոստացանք անարդար կարգերի դէմ եւ կտրեցինք մեզ հարուածող ձեռքը՝ ազատատենչ հայ ժողովուրդը ընդունակ չէ հանդուրժել ոչ բռնատիրութիւն եւ ոչ անարդարութիւն, մենք ինքներս նպաստեցինք առկայ խնդիրների լուծմանը:

Պարոն դեսպան, այդ «տարածքներում» են մեր ազգակիցները բնակուել, բնակուում, ստեղծել ու ստեղծում մշակոյթի համամարդկային նշանակութեան նմուշներ, այնպիսի նմուշներ որոնք զազանաբար կտրուում էին հայաթափուած մեր հայրենիք Նախիջեւանում համաշխարհային հանրութեան(այդ թւում եւ ձեր) աչքի առաջ, ուստի մեր հասարակութիւնը գիտակցում է, որ ինքն է հանդիսանում ե՛ւ իր ազգակիցների անվտանգութեան, ե՛ւ այդ պատմական ժառանգութեան պահպանման երաշխաւորը:

Այսօրք այլեւս ապարդիւն են ձեր դիւանագիտական շաղակրատանքները, միակ խնդիրը, որ հասու է ձեր լուծմանը՝ աղբբեջանական պետութեան իշխանութեանը իրականութեան հետ առերեսելն ու համակերպելն է:

Հայաստանի եւ հայ ժողովրդի խաղաղութեան միակ երաշխիքը Հայկական բանակն է եւ ինքը՝ հայ ժողովուրդը:

ՄԴՀԿ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ

Վահէ Գրիգորեանը կը Շարունակէ Պնդել, Որ Արմէն Սարգսեանը Օրինական Նախագահ Չէ

Աժ-ի մէջ կայացած քուէարկութեան արդիւնքով փաստաբան Վահէ Գրիգորեանը չէ ընտրուած Սահմանադրական դատարանի անդամ: Նախագահ Արմէն Սարգսեանի կողմէ առաջադրուած Գրիգորեանի թեկնածութեան կողմ քուէարկած է 30 պատգամաւոր, դէմ՝ 23, մինչդեռ քուէարկութեան մասնակցող պատգամաւորներու թիւը պէտք է գերազանցէր 62-ը:

Աւելի վաղ, լրագրողներու հետ զրոցի ժամանակ Վահէ Գրիգորեանը դժուարացած էր կանխատեսել՝ ինչ արդիւնք կ'ունենայ ընտրութիւնը: Ընտրուելու պարագային ալ պատրաստակա՞նութիւն յայտնած էր «ինչպէս հարկն է» աշխատիլ Սահմանադրական Դատարանի նախագահ Հրայր Թովմասեանի հետ՝ նշելով, որ աշխատանքի ժամանակ անձնական նախընտրութիւններով պիտի չառաջնորդուի:

Լրագրողները Սահմանադրական Դատարանի նախագահի թեկնածուին յիշեցուցած են, որ իրեն

Սահմանադրական Դատարանի անդամի թեկնածու առաջադրած է նախագահ Արմէն Սարգսեանը, որուն ինք բազմիցս քննադատած է՝ անուանելով ոչ օրինական: Հարցին՝ կը շարունակէ պնդել, որ Արմէն Սարգսեանը ոչ օրինական նախագահ է, Վահէ Գրիգորեանը պատասխանած է. «Արմէն Սարգսեանի լեկիթիմութեան հարցի վերաբերեալ իմ արտայայտած դիրքորոշումն ուժի մէջ է: Դա շարունակում է իմ դիրքորոշումը մնալ»:

Յիշեցնենք, երբ Սերժ Սարգսեանը Արմէն Սարգսեանին առաջադրեց նախագահի պաշտօնին փաստաբան Վահէ Գրիգորեանը այդ առաջադրումը հակաօրինական որակած էր՝ ընկերային ցանցի իր էջին վրայ գրելով, որ Արմէն Սարգսեանի չէ ներկայացուցած Մեծ Բրիտանիոյ քաղաքացիութեան հրաժարելու եւ վերջին վեց տարուան ընթացքին միայն Հայաստանի Հանրապետութեան քաղաքացի հանդիսանալու որեւէ ապացոյց:

Ռոպէրթ Քոչարեան Կուսակցութիւն Պիտի Հիմնէ

Հայաստանի նախկին նախագահ Ռոպէրթ Քոչարեան յայտարարած է, որ կը պատրաստուի նոր կուսակցութիւն հիմնել Հայաստանի մէջ: Քոչարեան այս մասին ըսած է ռուսական «Ռիա նովոստի» ծառայութեան տրուած հարցազրոյցի ընթացքին: Ան նաեւ ըսած է, որ կուսակցութեան անուանումը սկզբունքային չէ: «Ընդդիմադիր դաշտում լուրջ վակուում եմ տեսնում եւ կարծում եմ, որ պէտք է լցնել այն ի շահ երկրի», - ըսած է Քոչարեանը: Ռոպէրթ Քոչարեանը նշած է, որ բարձր պաշտօն գրաւելու ձգտում չունի, այլ պայս 10 տարի չէր ապրէր հասարակութիւնէն հեռու կեանք մը: «Իրադարձութիւններն

այնպէս են զարգանում, որ իրավիճակը քեզ ներքաշում է գործընթացի մէջ, որից չես կարող գերծմնալ՝ ելնելով կենսագրութիւնից, բնաւորութիւնից եւ կեանքի դիրքորոշումից», - ըսած է ան:

Քոչարեանը ըսած է, որ ան պիտի չմասնակցի դեկտեմբերին նախատեսուած խորհրդարանական ընտրութիւններու: «Ես անկուսակցական եմ եղել: Դա նշանակում է, որ զրոցից պէտք է կուսակցութիւն ստեղծել, նորացուած թիմով», - ըսած է ան՝ աւելացնելով, որ ըլլալիք գործընթացներուն մէջ պէտք է ներգրաւել ինք, տաճարական, երիտասարդ մարդոց, ի հարկէ, բերելով նաեւ իր նախկին թիմի անդամները:



**ԼՈՒՐԵՐ**

**Նիկոլ Փաշինեանի Հանդիպումը Ա.Գ. Ղուսակեան Կուսակցութեան Պատուիրակութեան Հետ**



Նիկոլ Փաշինեան եւ իրեն ընկերակցող պատուիրակութեան անդամները Ղուսակեան Կուսակցութեան ներկայացուցիչներուն հետ

Հայաստանի վարչապետի պաշտօնակատար Նիկոլ Փաշինեանի Պէյքրուսթի մէջ Հայաստանի դեսպանատան մէջ տեսակցութիւններ ունեցաւ հայ քաղաքական կուսակցութիւններու պատուիրակութիւններուն հետ:

Սոցիալ Դեմոկրատ Հնչակեան Կուսակցութեան Լիբանանի շրջանի վարիչ Մարմինի ատենապետ Ընկ. Սեպուհ Գալիաքեանի գլխաւորած վարիչ Մարմինի պատուիրակութեան հետ, որուն նաեւ մաս կը կազմէր Կեդրոնական վարչութեան անդամ Ընկ. Ալեքսան Քէօշկէրեան, Փաշինեան կարեւորեց հայ քաղաքական կուսակցութիւններուն հետ քննարկումները՝ Հայաստանի զարգացման, Հայաստան-Սփիւռք-Արցախ յարաբերութիւններու սերտացման եւ համահայկական օրակարգի հարցերուն շուրջ: Ան ընդգծեց իր առանձնապատու վերաբերմունքը լիբանանահայութեան եւ երիտասարդութեան նկատմամբ՝ շնորհակալութիւն յայտնելով թաւշեայ չեղափոխութեան ժամանակ կուսակցութեան աջակցութեան եւ աշխույժ դիրքորոշումին համար:

Ընկ. Գալիաքեան Հնչակեան կուսակցութեան ամբողջական գորակցութիւնը յայտնեց Փաշինեանին եւ անոր առաջարկած փոփոխութիւններուն: Ան կոչ ուղղեց առաւել կարեւորութիւն տալու երեք գլխաւոր կէտերու. առաջին՝ Հայաստանի եւ Արցախի անվտանգութիւնը, որուն պէտք է շատ ուշադիր ըլլալ: Երկրորդ՝ Ժողովրդավարութիւնը, ընկերային արդարութիւնը եւ մարդկային իրաւունքներու բարելաւումը, այնպէս մը, որ Հայաստանի իւրաքանչիւր քաղաքացին ինքզինք զգայ լաւապէս պաշտպանուած: Երրորդ՝ Հայ Դատի թղթածրարի հետապնդումը յառաջիկայ տարիներուն:

Ժողովին ընթացքին նաեւ քննարկուեցաւ Սփիւռքի մէջ շատ մը ընտանիքներու ինքնաբոխ հայրենադարձութեան որոշումի երեւոյթին մասին: Հնչակեան կուսակցութեան պատուիրակութիւնը առաջարկեց յառաջիկային չաւելեալ քայլերու դիմել, դիւրացնելու համար այդ ընտանիքներուն վերադարձը եւ Հայաստանի մէջ հաստատումը:

**Զախարովան ԱՄՆ Դեսպանին Մեղադրած է Հայաստանի Ներքին Գործերուն Միջամտելու Մէջ**

Ռուսաստանի ԱԳՆ պաշտօնական ներկայացուցիչ Մարիա Զախարովա մեկնաբանած է Հայաստանի իր գործունէութիւնը աւարտած ԱՄՆ դեսպան Ռիչըրտ Միլզի դնահատականները՝ զանոնք որակելով միջամտութիւն Հայաստանի ներքին գործերուն:



Ռուսաստանի ԱԳՆ պաշտօնական բանբեր Մարիա Զախարովա

Ինչ-որ պահու դեսպանը հասկցած է, որ նիւթը այլ տեղ կը տանի: Դեսպանը խօսած է նաեւ հայ Ժողովրդի անբեկանելի կամքի ու փոփոխութիւններու մասին:

«Եկէք որոշենք, այլ երկրներէ զործերին միջամտութիւնը լաւ է, թէ վատ», - արձագանգած է Զախարովան:

**Վարչապետ Նիկոլ Փաշինեանի Հանդիպումները Լիբանանի Մէջ**



Լիբանանի եւ Հայաստանի վարչապետներու հանդիպումը

Հոկտեմբեր 20-ին, Լիբանան կատարած աշխատանքային այցի շրջագիծէն ներս Հայաստանի վարչապետի պաշտօնակատար Նիկոլ Փաշինեան հանդիպումներ ունեցած է Երկրի նախագահ Միշէլ Աունի, Խորհրդարանի նախագահ Նապիհ Պըրրի եւ վարչապետ Սաատ Հարիրիի հետ:

Նոյն օրը երեկոյեան, Հայաստանի դեսպանատունէն ներս ան հանդիպած է հայ աւանդական կուսակցութիւններու? Հայ Յեղափոխական Դաշնակցութեան, Սոցիալ Դեմոկրատ Հնչակեան Կուսակցութեան եւ Ռամկավար Ազատական Կուսակցութեան ներկայացուցիչներուն հետ՝ ՀՅԴ Լիբանանի Կենտրոնական Կոմիտէի ատենապետ Յակոբ Բագրատունիի, ՍԴՀԿ Լիբանանի շրջանի վարիչ Մարմինի ատենապետ Սեպուհ Գալիաքեանի եւ ՌԱԿ Լիբանանի շրջանային վարչութեան ատենապետ Աւե-

տիս Տաքէսեանի գլխաւորութեամբ: ՀՀ վարչապետի պաշտօնակատարն իր կեցութեան վայրին մէջ նաեւ հանդիպում ունեցած է Լիբանանի հայկական «Արարատ», «Ազդակ» օրաթերթերու գլխաւոր խմբագիրներուն եւ «Սեւան» ու «Վանաչ Չալս» ռատիոկայաններու տնօրէններու հետ:

Վարչապետի պաշտօնակատարը, տիկնոջ ընկերակցութեամբ Կիրակի, Հոկտեմբեր 21, այցելած է Անթիլիաս, ուր հանդիպում ունեցած է Արամ Ա. Կաթողիկոսի հետ: Նիկոլ Փաշինեան ծաղկեպսակ զետեղած է Եղեւնի յուշարձանին:

Ապա, Փաշինեան մասնակցած է Արամ Ա. Կաթողիկոսի ձեռնադրման 50-ամեակի արարողութեան:

Նոյն օրը, վարչապետի պաշտօնակատարը այցելած է Պէյքրուսթի Հայկազեան համալսարանը եւ Զմմաուի Հայ Կաթողիկէ Պատրիարքարան:

**Սուրբ Հոգերու Երեք Յարանուանութիւնները Նամակով Դիմած են Իսրայէլի Վարչապետին**



Սուրբ Հոգերու երեք յարանուանութիւններու պատրիարքները նամակով դիմած են Իսրայէլի վարչապետ Բենիամին Նաթանիահուին՝ պահանջելով չեղարկել Քնեսեթի մէջ քննարկուելիք օրինագիծը, որով հրէական պետութեան իրաւունք կը վերապահուի բռնազրաւելիկեղեցապատկան կալուածները:

Ըստ այդ օրինագիծին, Քնեսեթի մէջ նաեւ նոր յանձնաժողով պիտի ստեղծուի, առանց որուն թույլտուութեան քրիստոնէական պատրիարքարանները հողերու վարձակալում չեն կրնար իրականացնել: Երուսաղէմի Հայոց պատրիարքարանի ղեկանապետ հայր Կորիւն վարդապետ Պաղտասարեանը

իր ֆէյսպուքեան էջին մէջ գրառում կատարած էր, մասնաւորաբար նշելով, որ «Հոգեւոր Պետերը օրինագիծը անուանած են ամօթալի եւ նամակին մէջ յիշեցուցած են տիրար Նաթանիահուին, որ յուլիս ամսուն Հոգեւոր Պետերուն ուղղուած իր նամակին մէջ ան վստահեցուցած էր վերջիններուս, որ օրինագիծը պէտք է ետ կանչուի»:

Քնեսեթի մէջ «Քուլանու» կուսակցութեան անդամ, պատգամաւոր Ռախել Ազարիան է օրինագիծի հեղինակը ու իր համոզմամբ եկեղեցական հողերու մասին օրէնքը կու գայ պաշտպանելու Երուսաղէմի այն բնակիչները, որոնք կը



# Ժամալ Խաչըքճիի Սպանութիւնը. Միջին Արեւելքի Մէջ Նոր Գործարքի Սկիզբ

## ՍԱԳՕ ԱՐԵԱՆ

Թուականը ճիշդ չեմ յիշեր, սակայն լաւ կը մտաբերեմ ամերիկեան բանակի գործը. Օլիվըր Նորթի վկայութեան տեսարանները Ամերիկեան Գոնկրէսին առջեւ:

Մեզմէ շատերը համակարծիք պիտի ըլլան գրածիս, որ հակառակ այն փաստին, որ Օլիվըր Նորթի նիստերը ձանձրալի էին, բայց եւ այնպէս եղած զարգացումները՝ Իրանի հետ գործարք կատարելու մասին տեղեկութիւնները կլանուած կը պահէին ամբողջ աշխարհը:

Անշուշտ մեր երէց սերունդի անդամներէն քիչեր կան, որոնք «օրն ի բուն» հետեւեցան լսումներուն եւ իմացան, որ ով ինչ «մեղք» գործած է մեծն Ամերիկայի դէմ:

Այդ օրերուն հաւանաբար քիչեր պիտի լինէին, որ ինչպիսի գէնք է մամուլի գէնքը, որ շատ մը պարագաներու աւելի ուժական է քան գերտէրութիւններուն կողմէ ստեղծուած ամէնէն «գարմանահրաշ» համարուած գէնքերէն շատ շատերը:

Այսօր ալ կարծէք բան չէ փոխուած: Փոխուած են անունները, դերակատարները, բայց խաղ բացողները եւ խաղաքարտեր բաշխողները կը շարունակեն մնալ նոյնը:

Կը խօսուի ժամալ Խաչըքճի անունով Մէնուտի լրագրողին մասին, որ 3 Հոկտեմբերէն ի վեր գրաւեց միջազգային ՁԼՄ-ներու լրահոսին առաջին հորիզոնականը:

Նշեցի 3 Հոկտեմբերը սակայն բոլորիս համար աւելի քան յստակ է, որ երկար տարիներ լոնտոն հրատարակուող «Ալ Զաթթ» պարբերականին մէջ ստորագրող ժամալ Խաչըքճիի «Թեման» առնուազն երկու-երեք տարուան կեանք ունի:

Խնդիրը կապ ունի Մէնուտական Արաբիոյ երիտասարդ եւ արեւմտեան մամուլին բնորոշմամբ «խոստմնալից» համարուող Մոհամմատ Պըն Սըլման գահաժառանգին հրապարակին վրայ երեւումին հետ, որ ակնյայտ բաժանումի մը տարաւ Մէնուտական, առանց անոր ալ ոչ այդքան ամուր դիրքեր ունեցող Ապտըլազիզ ընտանիքի գահը:

Յստակ է նաեւ, որ Խաչըքճի տարբեր առիթներով ու յաճախ կիրթ բայց «վրան բաց» յայտարարութիւններով կը խօսէր իր քաղաքական ուղղութեամբ մասին: Աւելի ու ան սուր քննդատութիւններ կը հնչեցնէր երիտասարդ գահաժառանգի հասցէին, այս անգամ ամերիկեան ամպիոնէն, բան մը որ գինք պիտի դնէր իշխող ընտանիքի գլխաւոր թշնամին դառնալու ոչ այդքան նախանձելի կարգավիճակին մէջ:

Մնացեալը բոլորիս համար յստակ է, ու այսօր աւելի քան պարզ է, որ ժամալ Խաչըքճին

սպաննուած է աւելի քան ողբերգական եւ ոչ մարդկային վիճակներու մէջ:

Անոր սպանութեան մանրամասնութիւնները, շատ յաճախ այդ մասին եղած «հորոր» ֆիլմեր յիշեցնող պատմութիւնները դեռ երկար ժամանակ պիտի շարունակեն դառնալ խնդրին հետ ուղղակի կամ անուղղակի կապ ունեցող կողմերու հանրութեան ուշադրութեան կեդրոն:

Խաչըքճի պիտի մեռնի: Պիտի մեռնի, ոչ միայն իր թշնամիներու հոգիներուն այլ նաեւ անոնց համար, որոնք իր սպանութեան դառն պատմութիւնը վերածեցին քաղաքական «փայլուն» օրակարգի:

Այսպէս, ժամալ Խաչըքճիի «գործարքը» Թուրքիոյ բանտերէն ազատ կ'արձակէ ամերիկացի պատուէլի Պրոնտոնը, էրոտողանին կու տայ նոր խաղաքարտեր ու նաեւ նեղէ կացութեան կը մատնէ երիտասարդ իշխանը:

Թուրքիա կարծէք թէ վերջնականապէս դուրս կու գայ իր «պլոքատաէն» ու աւելին՝ էրոտողան կը վերադառնայ բոլոր իսլամներուն անունով խօսելու իր նախկին երազին:

Մէնուտիք դրամական մեծ յատկացումներ կ'ընեն Անգարային, իսկ ԱՄՆ նախագահ Տանըլտ Թրամբ իր հազարաւոր համակիրներուն առջեւ կը խօսի քրիստոնեայ պատուէլին ազատագրած ըլլալու ընտրութիւններուն համար կարեւոր համարուած «քաղաքացիութեան» մասին:

Անշուշտ Խաչըքճիի սպանութեան հանգամանքները կրնան պարզուիլ աւելի ուշ, սակայն այս գործարքին մանրամասնութիւնները կը շարունակեն պահուիլ փակ դարակներու մէջ, այնքան ժամանակ, որ հանրութեան մօտ մեծ հետաքրքրութիւն կայ պարզելու համար սպանութեան «գործառոյթին» ամբողջական ժապաւէնը:

Այս բոլորին առընթեր եւ գուգահեռ մը գծելով էրոտողանի ժամալ Խաչըքճիի մասին խօսած ճարին ու այդ երկրին մէջ հայերու կամ քրիստոնէութեան սպանութեան դէպքերուն մասին աւելի քան նկատելի է, որ էրոտողան ինչ անհոգութեամբ կը մօտենար Հրանդ Տինքի կամ Թահէր Էլչիի նոյնքան զգրելի սպանութեանց թղթածրարներուն, մինչ ժամալ Խաչըքճիի պարագային ան հանդէս կու գայ, որպէս արդարութեան պահապան եւ «ջատագով»:

Այսպէս է երեւի «արդարութեան կշիռքը» Միջին Արեւելքի մը մէջ, ուր Օլիվըր Նորթն ու ժամալ Խաչըքճին մեզի կը ներկայանան նոյն պատկերով..

Ընդամենը Խորհրդաւոր գործարքներ, նաւթի, գէնքի եւ արեան մէջ խեղդուած եւ նոյն գերտէրութեան «խաղալիքներ»ը դարձած գործակատարներուն համար:

# Արաբական Աշխարհ Սեւտական Արաբիա Պիտի Ենթարկուի՞ Նախագահ Թրամփի Ծնշումներուն

ԱՄՆ-ի նախագահն այս օրերուն բազմակողմանի ճնշումներու ենթարկուած է, հակազդեցութիւն բանեցնելու իսթանպուլի մէջ խորհրդաւոր պայմաններու մէջ սէնուտի լրագրող Գաշօկճիի սպանութեան առթիւ: Արդարեւ, Մէնուտական Արաբիան ԱՄՆ-ի համար արժեւորուած է ոչ միայն որպէս դաշնակից պետութիւն, այլեւ յաճախորդ երկիր մը:



Արդարեւ անտնք ոչ միայն հոյակապ յաճախորդ մըն են գինուտրական սարքեր գնելու, այլեւ այլ մթերքներու: Այս կապակցութեամբ Թրամփ անցեալ շաբաթ հետեւեալը յայտարարեց «Երբ ես հոն էի անտնք հաւատարմօրէն յանձն առին 450 պիլոն տոլարի մթերք գնել եւ 110 պիլոնի ալ գինամթերք: Աստնք մեծագոյն առեւտրական պատուէրներն են ոչ միայն այս երկրին, այլեւս՝ բովանդակ աշխարհի համար»:

Նշենք որ Մէնուտական Արաբիոյ հետ գէնքի առեւտուրի ձեւաչափին շուրջ բանակցութիւնները շատ երկար ժամանակ խլած էր զոյգ երկիրներէն: Նոյնիսկ Օպամայի եւ Պուշի օրով եղած բանակցութեանց հիմա վրայ Թրամփի իշխանութիւնները համաձայնած էին 15-22 պիլոն տոլարի գէնքի վաճառք կատարել Մէնուտական Արաբիոյ: Իսկ անցեալ տարուան գեկոյցին հիման վրայ 23 տեսակ տարբեր արտադրատեսակներու ներդրումներ նախատեսուած էին:

Գալով Թուրքիոյ կողմէ վերջերս շղթայագերծուած բուռն ամբաստանութիւններուն Մէնուտական Արաբիոյ քաղաքացի Գաշօկճիի սպանութեան շուրջ եղած մեկնաբանութիւններուն՝ Սպիտակ Տան անանուն խօսնակ մը յայտարարած է «Մենք չենք կրնար լքել Մէնուտական Արաբիան»:

## Լիբանան. Կառավարական Տագնապ Դարձեալ Փակուղի Մտաւ

Անցնող օրերուն վարչապետ Հարիրիի գլխաւորութեամբ կազմուելիք Լիբանանի նոր կառավարութեան թղթածրարը դարձեալ փակուղի մտաւ: Այս մասին տեղեկութիւնը կը փոխանցեն լիբանանեան աղբիւրներ, նշելով, որ այս փուլին կառավարութեան կազմութեան գլխաւոր արգելքը կը հանդիսանայ Լիբանանեան Ուժեր կուսակցութեան կեցուածքը, որ դժգոհ էր տեղի ունեցած վերջին կարգադրութիւններէն:



Ըստ լրատուական աղբիւրներու, նոր կազմուելիք կառավարութեան մէջ արդարադատութեան եւ փոխ վարչապետի նախարարական աթոռները պիտի վստահուէին նախագահ Աունի կողմնակիցներուն, որուն պատճառով ալ Լիբանանեան Ուժերու դեկավարութիւնը մերժեց մասնակցիլ նման կառավարութեան մը:

Աւելի ուշ նաեւ յայտարարուեցաւ, որ Լիբանանի նախագահը համաձայնած է փոխ վարչապետի պաշտօնը տրամադրել Լիբանանեան Ուժերուն, սակայն նոր կառավարութեան կազմութեան առջեւ գլխաւոր արգելք հանդիսացող հարցը կը շարունակէ մնալ արդարադատութեան նախարարութեան խնդիրը:

Յիշեցնենք, որ չորս ամիսներէ ի վեր Լիբանանի վարչապետ Սաատ Հարիրի տարբեր եղանակներով եւ տարբեր անուանացուցակներով կը փորձէ նոր կառավարութիւն կազմել, սակայն կը հանդիպի արտաքին եւ մանաւա՛նդ ներքին արգելքներու:

## Սուրիոյ Մէջ Պատանդներու Ազատ Արձակում

Պէյրութէն ստացուած լուրերու համաձայն, քանի մը օր առաջ «Իսլամական պետութեան» խմբակցութեան անդամները ազատ արձակած են երկու կիներ եւ չորս երեխաներ, որոնք պատանդ պահուած էին անցեալ Յուլիս ամիսին ի վեր: Անոնք պայմանաւորուած էին Սուրիոյ իշխանութիւններու հետ փոխանակութիւններ կատարելու ձեռքբերուած տասնեակ մը կիներու հետ, որոնք Յուլիս 25ին Հարաւային Սուրիոյ նահանգին մէջ պատանդ առնուած էին, 216 հոգիներու սպանութեանէն ետք:

Սուրիոյ «Սանա» լրատու գործակալութեան համաձայն ազատ արձակուած կիներէն մէկը նկարագրած է իրենց 88 օրերու բանտարկութեան սարսափազդու իրավիճակի մասին: Անտնք պաղ եւ տաք օրերու, նապրած են հիւանդութեան, անօթութեան տառապալից ահաւոր պայմաններու ներքեւ: Ազատ արձակուած պատանդներէն մին իր ուրախութիւնը յայտնած է եւ աւելցուցած. «Իմ ուրախութիւնս կրկնապատկուած պիտի ըլլար եթէ իմ գաւազն ալ ազատ արձակուած ըլլար»:

Սուրիոյ «Սանա» կը հաղորդէ նաեւ որ ԱՄՆի կողմէ դեկավարուած օդային յարձակումները շարունակուելու Սուրիոյ արեւելեան շրջանին մէջ: Միայն Տէր Զօր նահանգին մէջ «Իսլամական պետութիւն» ոյժերուն դէմ եղած օդային ռմբակոծումներէն մահացած է առնուազն 62 հոգի:

Դժբախտաբար քաղաքացիական կռիւները կը շարունակուին կարգ մը շրջաններու մէջ, իսկ ուրիշ վայրերու մէջ անդորրութիւնը համեմատաբար աւելի տիրական է:

## Սուրբ Հոգերու Երեք Յարանուանութիւնները


Շարունակուած էջ 4-էն

բնակին եկեղեցապատկան հողերու վրայ ու հողերու վաճառքի պատճառով չեն դուրս չեն մնար: Տիկին Ազարիան իր տեսակէտը ներկայացուցած էր դեռ յունիս ամսուն հրէական «Ճերուսալեմ Փոսթ» հեղինակաւոր հանդէսին տուած հարցազրոյցին մէջ: Մարտ ամսէն մին-

չեւ օրս այս խնդիրը դեռ չէ լուծուած ու թէ՛ Նաթանիահուի, թէ՛ տարածքային կառավարման նախարար Յիսի Հանեկայի յայտարարութիւններուն հակառակ տիկին Ազարիան կը շարունակէ որոշակի փոփոխութիւններով քրիստոնեաներու հողերու բռնագրաման հետ կապուած իր նախագիծը քննարկման բերել:



# Մահացած է Աշխարհահռչակ Պոլսահայ Լուսանկարիչ Արա Կիւլէրը



Պոլսոյ Պէյօղլու շրջանին մէջ գտնուող պոլսահայ աշխարհահռչակ լուսանկարիչ Արա Կիւլէրի անունը կրող սրճարանին մէջ տրուել են Արա «պէյ»ի սիրած սեղանին դրուած են ծաղիկներ ու լուսանկարներ:

Նշանաւոր արուեստագէտը մահացած է 17 Հոկտեմբերի ուշ երեկոյեան Շիշլիի հիւանդանոցին մէջ 90 տարեկան հասակին սրտի կաթուածի հետեւանքով: Պոլսոյ մէջ կը սգան հանրայայտ լուսանկարչի մահը, մարդիկ ցաւակցելու կուզան քաղաքի սիրուած վայրերէն մէկը համարուող՝ «Արա-գաֆէ»:

Ան յաճախ ներկայ կ'ըլլար իր անունը կրող սրճարանին մէջ. Համեստ կերպով կը նստէր անկիւն մը, օրուան մամուլը կը թերթէր: Անոր արուեստի երկրպագուներն ալ առիթ կ'ուենային հանդիպել եւ գրուցել վարպետին հետ:

Սրճարանի սեփականատէր Եւա Զար Քարթթօղլուն կ'ըսէ, թէ

է նաեւ Հայաստանի վարչապետի պաշտօնակատար՝ Նիկոլ Փաշինեանը:

Միջազգային բազմաթիւ մրցանակներու արժանացած Արա Կիւլէրը ծնած է Պոլսոյ մէջ 1928 թուականին: Դեռ դպրոցական տարիքէն հետաքրքրուած է թատրոնով, սինեմաշխարհով եւ լուսանկարչութեամբ: Զինք անուանած են «Ստամպուլի աչք», «Ակնթարթի որսորդ», «100-ամեակի լաւագոյն լուսանկարիչ», «Անգերազանցելի ֆոտոպատմաբան»: Ան իր լուսանկարներուն մէջ պատկերած է է հին ու նոր Պոլիսը, Արեւմտեան Հայաստանի քաղաքներն ու յուշարձանները: Կիւլէրի ոսպնեակը «որսացած» է այնպիսի նշանաւոր դէմքեր, ինչպիսին են Ուինսթըն Չըրչըլը, Փապլո Պիկասոն, Սալւատոր Ծալին, Սոֆիա Լորէնը, Ուիլյամ Սարոյեանը, Սերգէյ Փարաջանովը եւ ուրիշներ:

Ամիս մը առաջ Պոլսոյ Պո-



Կիւլէրի ժառանգութիւնը համաշխարհային նշանակութիւն ունի՝ «Կիւլէրը պոլսեցի է, ուր կ'ապրին տարբեր ազգեր՝ հայեր եւ յոյներ: Ան ուշադիր կերպով կը հետեւէր քաղաքի կեանքի, բան մը որ կ'արտացոլար իր աշխատանքներուն մէջ: Կիւլէրի ձգած ժառանգութիւնը ո'չ թուրքերուն, ո'չ էլ հայերուն կը պատկանի, այլ ամբողջ աշխարհին: Բնականաբար Կիւլէրի լուսանկարները մեծաւ մասամբ կը վերաբերին թուրքիոյ, սակայն ան այցելած է բազմաթիւ երկիրներ եւ լուսանկարած է շատ բաներ: Ի վերջոյ Արա Կիւլէրը հին Պոլսոյ վերջին վաւերագիրն էր»:

Թուրքիոյ նախագահ Ռէճեփ Թայյիփ Էրտողան մեծ հայրդիրի մահուան կապակցութեամբ հեռաձայնած ու ցաւակցութիւն յայտնած անոր հարազատներուն:

Յաւակցական հեռագիր լղած

մոնթի գարեջուրի գործարանի պատմական շէնքին մէջ բացուեցաւ մեծամասն արուեստագէտի թանգարանը, ուր ներկայացուած են Կիւլէրի արխիւային լուսանկարները, անոր գրած պատմութիւնները, նօթերը, տեսանիւթերը, նկարները, անձնական իրերը, գիրքերը եւ լուսանկարչական սարքերը:

Հոկտեմբեր 21-ին, վերջին հրաժեշտ տրուած է Արա Կիւլէրին: Կիւլէրի դին դրուած էր քաղաքի կեդրոնական Պէյօղլու թաղամասի Երեք խորան հայկական եկեղեցու մէջ, ուր տեղի ունեցած էր հոգեհանգիստը:

Կիւլէրի մարմինը եկեղեցիէն դուրս բերուած է հայկական տուտուկի ու «Տէլ եաման»-ի հնչիւններու ներքոյ՝ փաթթուած թրքական դրօշով: Լուսանկարիչի դին ամբողջութեամբ է Պոլսոյ հայաշատ Շիշլի շրջանի հայկական գերեզմանատան մէջ:

# Հայաստանի Ազգային Ժողովը Տապալեց

Շարունակուած էջ 1-էն

ըողանան վերածել ուեանշի (վրի-ժառութեան) գործիքի», ըսաւ Նիկոլ Փաշինեան:

Օրինագծին կողմ քուէարկած են 56 պատգամաւորներ, սակայն պէտք էր 63 կողմ ձայն: Դէմ քուէարկած է 3 պատգամաւոր: Մնացածը չեն մասնակցած քուէարկութեան: ՀՀԿ-ն աւելի վաղ յայտարարած էր, որ կողմ չէ նախագիծին:

ՀՀ կառավարութիւնը Հոկտեմբեր 16-ի իր նիստին հաւանութիւն տուած էր ընտրական օրէնագիրքի բարեփոխումներու փաթեթին:

Ընտրական օրէնագիրքի առաջարկուող բարեփոխումներով վարկանշային ընտրակարգէն անցում պէտք է կատարուէր համամասնական ընտրակարգի, խորհրդարանի անցողիկ շեմը պիտի նուազեցուէր մէկ տոկոսով, պիտի կրճատուէր ընտրական գրաւը:

ՀՀԿ-ի որոշումը՝ դէմ ըլլալ

ընտրական օրէնագիրքի նախագիծին, փոքրիկ սաբոտաժ էր, որմէ կը տուժի քաղաքական դաշտը: Այս մասին լրագրողներու հետ ձեպագրուցի ժամանակ ըսած է «Ելք» խմբակցութեան պատգամաւոր Ալէն Սիմոնեանը: «Ես չեմ հասկանում, ինչու են նրանք գնում քաղաքական ինքնասպանութեան: Դրանից քաղաքական դաշտն է տուժում, Քաղաքացիական Պայմանագիրը չի տուժում», - ըսած է ան:

Ան նշած է, որ եթէ նոր ընտրական օրինագիրքով ընտրութիւններու երթալով աւելի շատ կուսակցութիւններ կրնային ներկայացուած ըլլալ խորհրդարանին մէջ: «Իրենք ամէն ինչ արեցին, որպէսզի շարունակեն քաղաքական դաշտը ոչնչացնել, եւ վստահ եմ, որ նորից գալու են, դռն են ծեծելու, ասելու են՝ մենք Հայաստանի ժողովրդի համար ուղղակի մեռնում ենք, ամէն ինչ արել ենք», - ըսած է Սիմոնեանը:

# Լուս Անճելոսի Մէջ Մեծ Շուքով Նշուեցաւ

Շարունակուած էջ 1-էն

Վերապատուելի Տօքթ. Վահան Թութիկեան:

ներկայացուց թրփանձեան կրթական Հիմնադրամի օժանդակութիւնները եւ Տօքթ. Սթիվ Ահարոնեան՝ Շիին Ընտանեկան Հիմ-

100-ամեակի առթիւ, տարուայ ընթացքին Ամերիկայի Հայ Աւետարանական Ընկերակցութեան ի նպաստ եղած է շուրջ 12 միլիոն

**Ս. Դ. ՀԱՉԱԿԵԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԻՒՆ**

ԿԵՂՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ

**S.D. HUNCHAKIAN PARTY**

CENTRAL COMMITTEE

E-Mail: [CentralCommittee@sdhp.net](mailto:CentralCommittee@sdhp.net)

---

Տիար Չաւէն Խանձեան,  
Գործադիր Տնօրէն  
Ամերիկայի Հայ Աւետարանական Ընկերակցութեան

Մեծայարգ Պրն. Խանձեան,

Սոցիալ Դեմոկրատ Հնչակեան Կուսակցութեան Կեդրոնական Վարչութեան անունով ջերմօրէն կը շնորհաւորենք՝ Ամերիկայի Հայ Աւետարանական Ընկերակցութիւնը 100-ամեայ Յոբելեանին առիթով:

Մենք բարձր կը գնահատենք Հայ Աւետարանական Ընկերակցութեան ունեցած դարամեայ ներդրումը հայ ազգային կեանքի հոգեւոր, մտաւոր և բնկերային բնագաւառներէն ներս, ինչպէս նաև անոր անխախտ նուիրումը ազգին և հայրենիքին:

Բարի երթ և նորանոր յաջողութիւններ կը մաղթենք Ամերիկայի Հայ Աւետարանական Ընկերակցութեան:

Ի դիմաց՝  
Սոցիալ Դեմոկրատ Հնչակեան Կուսակցութեան Կեդրոնական Վարչութեան

Աստուայի

Վագրէն Կոնստանտին

Աստուայեան

Տօքթ. Համբիկ Մարաֆեան

Մայիս 11, 2017

ՍԴՀԿ Կեդրոնական Վարչութեան շնորհաւորական խօսքը Հայ Աւետարանական Ընկերակցութեան 100-ամեակին առթիւ

նադրամի նպաստը: Այս առթիւ ցուցադրուեցան անոնցմէ իւրաքանչիւրի մասին պատմող ժապաւէններ: Բարերարներուն եւ կամ անոնց հարազատներուն յանձնուեցան 100-ամեակի յատուկ յուշանուէրները:

Եզրափակիչ շնորհակալական խօսքով հանդէս եկաւ Ամերիկայի Հայ Աւետարանական Ընկերակցութեան գործադիր տնօրէն Պր. Չաւէն Խանձեան:


Փակման աղօթքը կատարեց

տուր նուիրատուութիւն:

100-ամեակի առթիւ հրատարակուած ճոխ գրքոյկին մէջ կային շնորհաւորանքի եւ գնահատանքի գրութիւններ՝ յղուած Հայաստանի Հանրապետութեան նախագահին, Ամենայն Հայոց Հայրապետին, Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսին, Հայ Կաթողիկէ Պատրիարքին, ՍԴՀԿ-ի, ՀՅԴ-ի, ՀԲԸՄ-ի եւ բազմաթիւ այլ ազգային կազմակերպութիւններու եւ հաստատութիւններու կողմէ:



# Արեւմտեան Թեմի Միօրեայ Ժողով «Քահանայութիւնը եւ Եկեղեցականի Ծառայական Վկայութիւնը»



Միացեալ Նահանգներու Արեւմտեան Թեմի Առաջնորդարանին մէջ, Հոկտեմբեր 15, 2018ին, Թեմի Հոգեւորականներու մասնակցութեամբ տեղի ունեցաւ հանդիպում մը, որուն Օրակարգի գլխաւոր նիւթն էր Եկեղեցւոյ «Քահանայութիւնը եւ Եկեղեցականի Ծառայական Վկայութիւնը»:

Ժողովը սկսաւ Առաւօտեան Աղօթքով-ժամերգութեամբ, որուն յաջորդեց Թեմի Առաջնորդ Սրբազանին՝ Յովնան Արք. Տէրտէրեանին խօսքը: Առաջնորդը իր խօսքը կեդրոնացուց Քահանայութեան խորհուրդի բարձրութեան, անոր նշանակութեան, եկեղեցականի պատրաստութեան, պաշտօնի պատասխանատուութեան եւ անոր անձնագործ ծառայութեան: Անդրադարձաւ որ շատ ընդարձակ նիւթ մըն է «Եկեղեցի, ժողովուրդ եւ Ծառայութիւն» յղացքը, որուն «Աւանցքը կը կազմէ Եկեղեցականին շարունակական պատրաստութիւնը եւ ինքնաթափանցումը՝ Աստուծոյ Խօսքին եւ Աւետարանին Լոյսով»: Իր խօսքը եզրակացուց ըսելով թէ «Քահանայութիւնը ապրումի եւ աշխատանքի ծառայութիւն է»:

Օրակարգի նիւթերուն առաջինն էր «Եկեղեցականի կոչումը եւ անոր Ծառայական Կեանքին Վկայութիւնը»: Այս մասին ելոյթ ունեցաւ ներկայ Հոգեւորականներէն՝ Արժն. Տ. Վազգէն Քհնյ. Պոյաճեան (Հոգեւոր Հովիւ Seattle): Նիւթը աւելի խորացաւ ներկայ Հոգեւորականներու քննարկումներուն մասնակցութեամբ՝ յատկապէս նկատի առնելով Հոգեւորականներուն հովուական, գրասենեկային եւ ընկերային ծառայութեան դժուարութիւնները...:

Նկատի ունենալով Հոգեւորականի ծառայութեան դաշտին ներս յայտնուած նաեւ «Հոգեմտային հիւանդներու» ներկայութիւնը, այս առիթով հրաւիրուած էր Կլենտէյլ քաղաքի Adventist հիւանդանոցի փորձառու Հոգեբոյժ՝ Dr. Lucas Alexanian: Հիւր Հոգեբոյժը անդրադարձաւ երկու հիմնական երեւոյթներու.- «Եկեղեցականներուն Հոգեւոր առաքելութիւնը» եւ Հոգեբոյժներու «Հոգեմտային հիւանդներու բժշկական ծառայութիւնը», ընդգծելով որ երկու առաքելութիւններն ալ սահմանուած են մարդոց Հոգին եւ Միտքը բուժելու՝ նկատի առնելով հոգեբանական անհանգստութիւններ, հոգեմտային հանգոյցներ, վտանգաւոր հոգեվիճակներ եւ հոգեբուժային օգնութիւններ: Ներկաներուն կողմէ

մէ յարգելի Հոգեբոյժին ներայացուեցան բազմաթիւ հարցեր եւ պարագաներ, որոնց տրուեցաւ գիտական բացատրութիւններ եւ լուծուածներու առաջնորդող միջոցներ:

Հոգեւոր Խորհրդածութիւններ ներկայացուցին Արժն. Տ.Նասայի Քհնյ. Պետրոսեան (Fresnoի Հոգեւոր Հովիւ) եւ Արժն. Տ. Գրիգոր Քհնյ. Զաքարեան (Rancho Mirageի Հոգեւոր Հովիւ), կեդրոնանալով յատկապէս Քահանայական Կեանքի ծառայութեան կապուած գործողութիւններուն եւ դժուարութիւններուն, բայց նաեւ ստացուած ներքին գոհունակութիւններուն՝ Աստուծոյ Օրհնութեան եւ վարձատրութեան:

Ներկայ Հոգեւորականներէն շատեր ներկայացուցին Քահանայական Կեանքի իրենց անձնական «Վկայութիւնը»՝ անդրադառնալով իրենց ծառայութեան դժուարութիւններուն, լուծուածներուն եւ ինքնաբաւարարութիւններուն:

Առաջին վկայութիւնը փոխանցեց Հոգչն. Տաճատ Մ. Վրդ. Եարտրմեան, որ նաեւ վարիչն էր Հոգեւորականաց ժողովին: Իր խօսքին մէջ ան ըսաւ նաեւ.- «Իմ Քահանայական Կեանքիս տարիներու ընթացքին, յատուկ ուշադրութեամբ ջանացած եմ Հաւատքս ամրապնդել, խորացնել, Քահանայական եւ Եկեղեցական կեանքս շանցընել անհեթեթ զբաղումներով, այլ գիտելիքներու սահմանները ընդարձակելով, խորհելով, աղօթելով, Քահանայական-Եկեղեցական առաքելութեանս պարտաւորութիւնները եւ յանձնարարութիւններս կատարելով, կարդալով, գրելով, հրատարակելով, քարոզելով, դասաւանդութիւններ ընելով, սորվեցնելով, ուրիշներու ուղղութիւն տալով եւ այս բոլորը իբր անձնական արտայայտութիւն Հաւատքիս, Քահանայական-Եկեղեցական ծառայութիւններու եւ համոզումներու» միշտ հաւատալով Եկեղեցւոյ մեծ Առաքելութեան: ... Ճիշտ է նաեւ, որ հոգեւոր եւ եկեղեցական մարտահրաւէրներուն յաղթահարումը երբեք դիւրին չէ եղած»:

Միօրեայ այս Հաւաքին, Առաջնորդ Սրբազանը կատարեց իր եզրափակիչ խորհրդածութիւնները, շեշտելով որ Քահանայութիւնը ժամանակի մէջ կ'աճի, կը զարգանայ եւ ամէն Հոգեւորական պարտաւորութիւն ունի միշտ ինքզինքը գօտեպնդելու Աստուծոյ ներկայութեամբ, Անոր Խօսքին Լոյսով եւ Օրհնութեամբ:

# Իրանահայ Միութիւնը Նշեց «Հայ Մշակոյթի Օրը»

Ուրբաթ, Հոկտեմբեր 19ին, 2018 երեկոյեան ժամը 7ին Իրանահայ Միութեան Գրականութեան եւ Արուեստից բաժանմունքը միութեան գրադարանի սրահում կազմակերպել էր գրական ձեռնարկ Հայ Մշակոյթի Օրուն նուիրուած:

Ծրագրի հաղորդավարն էր Անդրանիկ Ղարախանեանը, որն ամենայն հմտութեամբ կատարեց իր ստանձնած պարտաւորութիւնը: Հայ մշակոյթի մասին խօսք առան Սարգիս Միրզայեանը, Շաքէ Եղիազարեանը, Էդիկ Հայրապետեանը եւ Ներսէս Տ. Մեսրոպեանը: Պատշաճ երգերով հանդէս եկան շնորհալի երգիչներ Օննիկ Միմոնեանը, Սաֆօ Նազարեանը, Արիս Մեհրաբեանը եւ Ատրինէ Միրզախանեանը: Երգերին ընկերակցում էր անուանի դաշնակահար Սիմոն Սիմոնեանը, որն

արժանացաւ բուռն ծափերի: Արտասանեցին Սիւնէ Մինասեանը, Նինել Միմոնեանը եւ Սուրէն Մինասեանը:

Հանդիսութեան աւարտին շնորհակալական խօսքերով հանդէս եկաւ վարչութեան անունով Կարէն Զարգարեան, որն զնահատելով հանդէսի կազմակերպիչներին եւ ծրագրի մասնակիցներին, ծաղկեփունջ յանձնեց նրանց: Նշելի է որ այս առթիւ սրահի պատերը զարդարուած էին հայ գրողների, երաժիշտների եւ մշակոյթի գործիչների նկարներով, որոնք կազմել էլ խնամքով դասաւորել էր Սուրէն Մինասեանը, որի աշխատանքը բարձր զնահատուեց հանդիսականների կողմից: Բացառիկ այդ երեկոն աւարտուեց երեկոյեան ժամը 9ին:

Ներկայ մը

# Մաեստրօ Վ. Գրիգորեանը Ներկայացնում է՝ «Քամանչայի Չայնը»

Ապրիլ Գրատան Երաժշտական Երեկոյ՝ «Քամանչայի Չայնը» ներկայացնում է՝ Մաեստրօ Վ. Գրիգորեանը, տեղի կ'ունենայ Շաբաթ, Հոկտեմբեր 27-ին երեկոյեան ժամը 7:30ին Ապրիլ Գրատան մէջ, 415 E. Broadway, Glendale:

Արդի ժամանակներու իրողութեան մէջ Պոլիս անգամ մը եւս կը ներկայանայ հայ հրատարակչութեան կարեւորագոյն օրրաններէն մէկը ըլլալով: Անշուշտ որ այստեղ կայ շատ կարեւոր տարբերութիւն մը բազմազան մասնաճիւղերէն համայնապատկերին: Անցեալին Պոլիս հայերէն հրատարակչութիւններու կարեւորագոյն օրրանն էր, ուր հայ մշակուցի արձանագրած մեծ ուսուցիչ գուգահեռ իրարայաջորդ կերպով կը հրատարակուէին բազմաթիւ գիրքեր, մեծաւ մասամբ գրական արժէք ներկայացնող գործեր: Իսկ այսօրուայ իրողութիւնը կը ներկայանայ շատ աւելի տարբեր երեւոյթով մը: Այս անգամ չենք կրնար խօսիլ հայերէն եւ հայատառ գրականութեան մասին, այլ այդ գրականութեան շատ կարեւոր մէկ բաղադրիչի՝ թարգմանչութիւններու վերաբերեալ: Այսօր լոյս տեսնող գիրքերը թէեւ հայերէն չեն, բայց ամբողջովին հայկական: Այս ոլորտը կը պարտինք «Արաս» հրատարակչութեան, որ իբր առաջնութիւն որդեգրած է հայ գրականութիւնը ծանօթացնել թրքերէն ընթերցող զանգուածին: Իր կարգին շատ կարեւոր առաջնութիւն մըն է այս մէկը, քանի որ սոյն գրականութիւնը հետզհետէ դատապարտուած էր մոռացութեան եւ շնորհիւ այս նոր գարթօնքի, ան կը վերակենդանանայ եւ ուշադրութիւնը կը գրաւէ զանգուածի մը, որ պատմա-քաղաքական ինչ-ինչ պատճառներով գրկուած էր անոր հետ հաղորդակցելու կարելիութենէն:

Ընթերցողը արդէն գուշակած է, խօսքը կը վերաբերի «Արաս» հրատարակչատան, որ սոյն տարուայ Սեպտեմբեր ամիսը եւս բոլորեց խիստ շահեկան ու նոր հրատարակչութիւններով: Բացի հրատարակչական հարստութենէն, ուշագրաւ է այս ոլորտէ ներս ձեռք բերուած արտակարգ յաջողութիւնը: Նախ անդրադառնանք հրատարակչատան սա վերջերս լոյս ընծայած հատորներուն: Առաջին հերթին կը տեսնենք Գառնիկ Բանեանի շատ կարեւոր յուշագրութիւնը՝ «Յուշեր մանկութեան եւ որբութեան» հատորը, որ թրքերէն թարգմանութեամբ լոյս տեսաւ «Մնաս բարեաւ Անդուրա» խորագիրով: Այս յուշագրութիւնը վկա-

յութիւններ կը պարունակէ մանկութիւն չունեցող սերունդի մը՝ Մեծ եղեռնի որբերուն տխուր պատմութենէն:

Շատ կարեւոր երկրորդ գիրք մըն է ակադեմիական ճանտան Պատեմի ուսումնասիրութիւնը, որ նիւթ կ'ունենայ 1877-1878 տարեթիւերուն Ռուս-Օսմանեան պատերազմէն ետք ուսական իշխանութեան ենթարկուած Կարսի, Արտահանի եւ Արթիւնի շրջակայքի անցուդարձերը: Պատմաբաններու կողմէ արժանի կերպով չէ ուսումնասիրուած պատմութեան այս հատուածը, հետեւաբար ճանտան Պատեմի այս ծաւալուն աշխատասիրութիւնը նոր հորիզոններ կը բանայ, թէ հայ եւ թէ այլ ազգի պատմաբաններու առջեւ: Նշենք, որ Պատեմ այս աշխատասիրութիւնը կատարելու ընթացքին ուսումնասիրած է ուսական, վրացական եւ հայկական արխիւները: Ան որոշ ժամանակ Հայաստանի մէջ ալ հետեւած է հայերէն դասընթացքներու աւելի հմուտ կերպով ուսումնասիրելու համար հայերէն փաստաթուղթերը:

«Արաս»ի Սեպտեմբերեան հունձքին մաս կը կազմէ նաեւ գիւղագիր Մկրտիչ Մարկոսեանի հաստափոր հատորի մը մէջ մէկտեղուած գրական գործերը: Այդ գործերը, որ նախապէս մեծ ժողովրդականութեան արժանացած էին այժմ ամբողջական մատենի մը ձեւով կը դրուի ընթերցողներու սեղանին վրայ համախմբելով նախապէս անջատաբար լոյս տեսած բոլոր գրական երկերը:

Պարտիք նշել, որ «Արաս» իր հետ ունենալով այս նոր հրատարակչութիւնները, վերջերս մասնակցած էր Տիպապեքի գիրքի փառատօնին: Փառատօնի կազմակերպիչները այս տարուայ «Պատուոյ հիւր» ընդունած էին Մկրտիչ Մարկոսեանը, որ գիրքի փառատօնի տեւողութեամբ արժանացաւ Տիպապեքի ընթերցասէրներու բուռն հետաքրքրութեան:

Այս բոլորին վրայ եկաւ աւելինալու մի այլ ոգեւորութիւն, քանի որ «ՓեՆ» Գրողներու համաշխարհային միութեան Թուրքիոյ մասնաճիւղը ողջունեց Մկրտիչ Մարկոսեանի գրական վաստակը, զինք կոչելով այս ամսուայ կարեւորագոյն գրողը:

### Մերոպ Մաշտոցի Անուան Մատենադարանը Հարստացաւ Մի Շարք Հնատիպ Արժէքաւոր Գրքերով



Մ ե ս ո ղ Վ Մաշտոցի անուան Մատենադարանում տեղի ունեցաւ նուիրատուութեան արարողութիւն: Մատենադարանի բարերար, իրանահայ բանասէր, գրող, ուսուցիչ, հասարակական յայտնի գործիչ Լեւոն Մինասեանի դուստրը՝ Նիւ Եորքում բնակուող Արմինէ Մինասեանը, իր հօր անձնական գրադարանից Մաշտոցեան Մատենադարանին նուիրաբերեց 21 միաւոր հնատիպ արժէքաւոր գրքեր եւ հայագիտական գրականութիւն (1668-1912թթ.):

Բացման խօսքով հանդէս եկաւ Մատենադարանի տնօրէն վահան Տէր-Ղեւոնդեանը: Ելոյթ ունեցան Մատենադարանի գլխաւոր աւանդապահ Գէորգ Տէր-Վարդանեանը, Հայագիտական տպագիր գրականութեան եւ մամուլի բաժնի վարիչ Ռայա Բլբլուեանը եւ նուիրատուն՝ Արմինէ Մինասեանը:

«Ուրախ եմ, որ այս մի քանի կտոր նշխարները կարողացայ յանձնել այս սուրբ օճախին», - ասում է Արմինէ Մինասեանն ու յաւելում, որ այս նուիրատուութեամբ իր պարտականութիւնն է կատարում հոր, իր ազգի, մշակուցի եւ լեզուի հանդէպ:

Մատենադարանի տնօրէն վահան Տէր-Ղեւոնդեանը Արմինէ Մինասեանին յանձնեց «Մատենադարան» յուշամետալ:

Լեւոն Մինասեանը շուրջ 80 գրքերի հեղինակ է, պարգեւատրուել է «Մերոպ Մաշտոց» շքանշանով, «Յակոբ Մեղապարտ» շքանշանով, Կիլիկեան ասպետի, Վ. Սարոյեանի մետալներով, Նոր Զուղայի բարեգործական ընկերակցութեան մետալով:

Լեւոն Մինասեանը եղել է Նոր Զուղայի Ս. Ամենափրկիչ վանքի թանգարան-տպարանի տնօրէնը: 1997թ. Քեմպրիճի Միջազգային կենսագրական կեդրոնը Լեւոն Մինասեանին արժանացրել է 1996-1997 թուականների «Տարուայ Մարդ» կոչմանը:

ՊԱՊԻՆ ՄՈՒՐԱԿԵԱՆ

### ՀՀ Սփիւռքի Նախարարութիւնը Եւ ՀԲԸՍ Հայկական Առցանց Համալսարանը Կը Համագործակցին

ՀՀ սփիւռքի նախարարութիւնը եւ ՀԲԸՍ Հայկական վերտուալ համալսարանը (ՀՎՀ) ստորագրեցին փոխըմբռնման յուշագիր: Վերջինս պաշտօնապէս կը հաստատէ նախարարութեան եւ ՀՎՀ-ի միջեւ ձեւաւորուած երկարատեւ համագործակցութիւնը՝ միտուած հայ ինքնութեան պահպանման սփիւռքի մէջ: Յուշագիրին համաձայն՝ համալսարանը կ'աջակցի նախարարութեան երիտասարդական, հայրենաստանաչորական ու այլ ծրագրերներու ծիրէն ներս կրթական ձեռնարկներու իրականացման: ՀՎՀ-ն նաեւ հայոց լեզուի, պատմութեան եւ մշակուցի դասընթացներ կը տրամադրէ նախարարութեան կողմէ կազմակերպուող «Քայլ դէպի տուն»,

ինչպէս նաեւ այլ ծրագրերներու մասնակիցներուն:

Այս գործակցութեան հիմքը դրուեցաւ «Քայլ դէպի տուն» ծրագրի մեկնարկով, որուն 440 մասնակիցները հայոց լեզու, պատմութիւն եւ մշակուցի սորվեցան 8օրեայ դասընթացներու ընթացքին: Ծրագրի կրթական բաղադրիչի հիմքին ՀՎՀ-ի առցանց դասընթացներն էին եւ հիպերտեքստներով մեթոտը՝ առցանց եւ աւանդական կրթութեան համակցմամբ: ՀՎՀ-ն նաեւ անվճար կազմակերպեց ծրագրին ընդգրկուած աւելի քան 20 ուսուցիչներու վերապատրաստումը:

Նկարներով, տեսանիւթերով

**Զօրացիւք Օժանդակե՛ք Փրկե՛ք**

Syrian Armenian Relief Fund  
P. O. Box 1948  
Glendale, CA 91209-1948

www.syrianarmenianreliefund.org



### Երեսուցեց Սանդուղներ Յաւերժութեան



#### Ռ. ԿՈՐԻԻՆ

Երեսուցեց Սանդուղներ օրերին նպատակադրել էի Սրբոց Թարգմանչաց տօնը յիշատակելուն թեհանում, ներկայ լինել պատարագի խորհրդին, այդու երեսուցեց ղեկավար Մեղրի-սահմանը անցյալ հանրակառքով ճամբին հիանալով բնութեան պարզեցնելով հրաշալիքներով: Ներկայ մի կտոր Հայաստանը գեղեցիկ է եւ առաւել գեղեցիկ իր ամբողջական տարածքներով, մեզ ինչ է մնացել, մի պոռնոսը Հայաստան, մի մասնիկը այն դրախտավայր երկրի, այդ բոլորը սովետի օրօք նուիրուել է մեր շարակամ հարեւաններին, երբ պիտի սրբագրուի այս ճակատագրական-սխալը, հողերը վերադառնան իր իսկական տիրոջը, յուսով կը լինի մի օր, միայն թէ մեր միասնական կուռ հաւատով եւ հօրացումով, արդեօք ուրիշ ելք կա՞յ...:

Ուրախ էի դարձեալ թեհանում իմ հարազատներին եւ ընկերներին այցելում էի եւ ներկայ էի գտնուելու Սրբոց Թարգմանչաց տօնի արարողակարգին, որը անուանում է նաեւ հայ մշակոյթի տօն, նաեւ մեր մշակոյթի գործիչների՝ ուսուցիչների տօնն է: Մեր ազգային-կրօնական մեծ տօներէց է նուիրուած մեր դպրութեան երախտաշատ կերտիչներին՝ եռամեծար Սրբ. Մեսրոպ Մաշտոցին, Սրբ. Սահակ Պարթեւ կաթողիկոսին եւ Սրբոց Թարգմանչաց Վարդապետներին: Տօնը կատարուած է Հոկտեմբեր ամսում, ողջ հոկտեմբերը նուիրուած է հայ մշակոյթին եւ գարդարուած է հանդէսներով «ոսկէ աշունի» պէս:

Մշակոյթը գոյութեան հիմք եւ ամբարտակ է, հայութիւնը երկար դարերի գուրկ պետականութիւնից իր մշակոյթի շնորհիւ է գոյատեւել եւ վերստին պետականութիւն ստեղծել հասնելով 21-րդ դարի այս գլոբալիզացիայի դարաշրջանին, որում, պէտք է կարեւորութեամբ վերաբերուել մեր մշակոյթի եւ մեր լեզուի հետ նկատելով այլասերումը ակնյայտ եւ ապագան տխուր է, ջրերը ղեկավարող կրթականների ճամբին են մեր սիրելիքեան իրականութեան մէջ, եթէ գորաշարժի չդրուեն մեր ուժերը Սփիւռքում, անշուշտ հայրենիքի օգնութեամբ, կասեցնելու սերունդների օտարացումը:

Մշակոյթի հիմնական եւ էական բանալին լեզուն է եւ լեզուամտածողութիւնը, նա է մեր լաւերժական կեանքի գրաւականը, սա-

կայն ցաւօք երիտասարդ մայրն իր մատղաշ երեխային ինչպէս է քաջալերում օտար լեզուով խօսելու, նրա ուղեղում դրոշմելով օտար լեզուամտածողութիւնը, հասկանալի է տարբեր լեզուների իմացութիւնը, բայց ոչ թոթովախօս մանուկին գրկել մայրենի լեզուից: Ծառը չորանում է բնի մէջ առաջացած որդից...:

Մենք վաղուց պիտի չքանայինք պատմութեան թատերաբեմից, եթէ մեր մշակոյթի հրապուրանքը չլինէր, մեր հոյակապ ու ճկուն, հարուստ ու քաղցրահնչիւն լեզուն չլինէր, մեր գեղազարդ տառերը՝ իւրաքանչիւրը նկարչական հոյակապ մի պատառ, մեր հոգեկան եւ բարոյական արժանիքները, մեր ընտանեկան սովորութիւնները եւ այլն չլինէին: Մենք երախտապարտ ենք մեր սիրագործ պապերին՝ Մեսրոպ Մաշտոցին, որ իր գիւտով լաւերժի ճամբան բացեց եւ հիմք դրեց ինքնուրոյն դպրութեան, Սահակ Պարթեւ կաթողիկոսին Աստուածաշնչի հայերէնի թարգմանութեամբ, Վռամշապուհ արքային նիւթականի օգնութիւններով՝ ապագայի տեսլականով, երեք անմահանուն այրեր ազգանուէր ու հայրենանուէր ծառայութեամբ:

Յար յիշատակելի է մեր Թարգմանիչ Վարդապետների փաղանգի ստեղծած վիթխարի կրօնական, փիլիսոփայական եւ պատմական գրականութիւնը, նրանք իրենց ուսուցիչների հետ միասնաբար ստեղծեցին հայոց դպրութեան «Ոսկեդարը», Աստուածաշունչի «Թագուհի թարգմանութիւնը»:

Ասում ենք՝ մեր մշակոյթի գանձարանը հարուստ է, ոսկեայ օղակներով հիւսք, եկէ՛ք, միասնաբար պահենք, պաշտպանենք եւ էլ աւելի փայլեցնենք այս հիւսքը նոր օղակներ գոյելով:

Հեռաւոր ԱՄՆ-ից եւ Իրանի հարեւան ու բարեկամ Հայաստանի ճամբով եկած կարօտի զգացումով մասնակցեցի հոկտեմբերի 13-ի եպիսկոպոսական սրբ. պատարագին, Սրբոց Թարգմանչաց Եկեղեցում, պատարագիչն էր Թ-ՀԹ-ի առաջնորդ Սեպուհ Արք. Սարգսեանը, հնչում էր մեղմահունչ երգեցողութիւնը, խորհրդաւոր մթնոլորտ, լեցուն հաւատացեալներ, նկատելի էր պապիկներ եւ տատիկներ բազկատարած աղօթելիս առ Աստուած, նրանք ինչ էին մըմնջում, ինչ էին աղերսում, վստահաբար զաւակների համար յաջող կեանք

### Յայտնի եւ Անյայտ Հայ Երիտասարդները



#### ՊԱՊԻՆ ՍՈՒՐԱԴԵԱՆ

Պարզում է, որ Հոլանդիայի առաջին եւ միակ «Luxury marketing» ընկերութիւնը («Studio Succes») պատկանում է երկու հայ երիտասարդների:

Իւրաքանչիւր հայ ուրախութեամբ ու հպարտութեամբ է լցում, երբ լսում կամ տեսնում է, թէ մեր հայրենակիցներն աշխարհի այս կամ այն մասում ինչպիսի յաջողութիւնների են հասել:

Կան մի շարք հաղորդաշարեր, որ մեզ տեղեկ են պահում աշխարհի հայերի մասին: Թերեւս տեղին է յիշել «Շանթ» հեռուստաընկերութեան «Աշխարհի հայերը» հաղորդաշարը: Սակայն հաւատացէ՛ք՝ հայ հանրութիւնն այս առումով դարձեալ տեղեկացուած լինելու կարիք ունի:

Աւելի քան եօթ միլիոն սիրուք ունեցող մեր ազգի մի շարք շնորհալի գաւակներ մեծածաւալ գործունէութեանը հայաստանաբնակներս յաճախ անհաղորդ ենք: Բանն այն է, որ նրանք առաւել համեստ են ու տեղեկատուական հարթակներում չեն ցանկանում երեւալ:

Օրերս գործուղումից վերադարձած դասընկերուհուս հանդիպեցի. ոգեւորուած, հիացած, երբեմն էլ զարմացած, ինչ-որ բաներից էլ հիասթափուած պատմում էր Հոլանդիայից:

Է՛հ, Աստուած Ուրիշամ Սարոյեանի հոգին լուսաւորի, լաւ է ասել էլի. «Աշխարհի որեւէ ծայրում, եթէ հանդիպեն երկու հայ, կը կերտեն մի նոր Հայաստան...»:

Արի՛ ու տե՛ս՝ դասընկերուհուս Հոլանտայում պատահական հանդիպել էր երկու հայի: Կարէնն ու Տարօնը հայի խելացի ու բազմաշնորհ գենը կրող, պարզ, բարի ու գործունեայ տղաներ են: Ասում են՝ միլիոնատէր չեն, բայց ձգտում են միլիոնատէր դառնալ, ունեն իրենց գրառումների նոթատետրը: Սահմանել են նշաձող եւ, փառք Աստուծոյ, մինչ օրս կարծես թէ իւրաքանչիւր տարիքի համար սահմանուած նպատակները կեանքի կոչելով՝ առաջ են ընթանում:

Պարզ ու ուղիղ հարցնում եմ ընկերոջս, թէ իրեն ի՞նչն առաւել դուր եկաւ այդ տղաների պարագայում: Նոյնքան պարզութեամբ ու ժպիտով պատասխանում է. «Ազգային մտածելակերպը», - ու լաւելում, որ նրանց մտածողութեան հիմքում ՀԱՅՆ է ու ՀԱՅԱՍՏԱՆԸ: Թերեւս սա էլ կարելի է համարել օտար ամբողջ ապրող ու ստեղծագործող այդ հայորդիների յաջո-

ղութեան գրաւականը:

Այսպիսով, հաւատալով իրենց ուժերին ու նպատակաւացութեանը՝ տղաները Հոլանտայում ստեղծում են մարքեթինգային ընկերութիւն: Ի պատիւ հայերի՝ Հոլանտայի «Luxury»-ի ուղղութեամբ մասնագիտացուած եզակի ընկերութեան հիմնադիրները մեր հայրենակիցներ կարէն Յակոբեանն ու Տարօն Մոսէսեանն են:

«STUDIO SUCCES Lux Branding» ընկերութիւնը սպասարկում է վերնախաիին եւ այն բրենդներին, որոնք ձգտում են ղեկավար բարձունքներ: Նրանց հիմնական նպատակն է ապահովել «Luxury brand»-ների հեղինակութիւնը:

Կարէնի ու Տարօնի ընկերութեան կայքէջը կարելի է մուտք գործել միայն VIP-ով: Այցելելով նրանց կայքէջը՝ տեսնում ենք հետեւեալ գրառումը. «Access only for exclusive audience» (Մուտքը բացառիկ լսարանի համար): Կայքն այցելելու համար պէտք է լրացնել համապատասխան հարցաթերթիկը, որից յետոյ՝ 14-30 օր, պէտք է սպասել արձագանքին:

Նրանք «Փարիզի նորածեւութեան շաբաթ»-ի (Paris Fashion Week) պաշտօնական հովանաւորներից էին: Միւս հովանաւորներն են եղել «ING Ki private banking»-ը, որը սպասարկում է Հոլանտայի միլիոնատէրերի բանկային գործողութիւնները եւ «Taranis Capital Group»-ը՝ ամերիկեան ներդրող ընկերութիւնը:

Ուսումնասիրելով նրանց «instagram»-ի էջը՝ պարզում ենք, որ նրանք համագործակցում են «Miss Universe Germany» հետ: Դեռ աւելին, տղաների գործողութեան շրջանակը բաւականին լայն է, եւ չեն սահմանափակուած միայն «Miss Universe Germany»-ով հայազգի երիտասարդներն աշխատում են «BaroQco» բրենդի համար, որը պատրաստում է աշխարհի լուրջ «Miss»-երի մեծամասնութեան թագերը:

«Karma Loog» բրենդի կայքի ստեղծողները եւս մեր հայրենակիցներ կարէնն ու Տարօնն են: Միլիարդատէրերը, ովքեր ցանկանում են շքեղ հագուստներ գնել, պատուիրում են «Karma Loog»-ի միջոցով, եւ ապրանքն առաքում է ինքնաթիռով: «Karma Loog»-ը Հոլանդիայի ամենաթանկ խանութն է եւ աշխարհում ընդունուած ամենաթանկ բրենդներից մէկը:

Նրանք պատրաստել են «Karma Loog»-ի պաշտօնական կայքը եւ նրանց ամենաթանկ տեսականին են նկարահանել:



# Սրբոց Թարգմանչաց Վարդապետների Տօն

«Ճանաչել Ձիմաստութիւն եւ Ձխրատ, Իմանալ Ձբանս Հանճարոյ»  
Սողոմոնի Առակներ

## ՊՕՂՈՍ ԱՐՄԵՆԱԿ ԼԱԳԻՍԵԱՆ

Հայոց «Առաքելական Եկեղեցի»-ն, «Եկեղեցու Հայրերի» շարքին էր դասել՝ հոգեւոր, մշակութային ու լուսավորութեան գործի նուիրեալներ՝ «Թարգմանչաց» գործիչներին: Տարին երկու անգամ տօնախմբում են նրանց սրբալույս յիշատակը: Յունիսի վերջին, Յուլիսի սկզբներին, Ամատունի նախարարական տան՝ Օշական աւանում, յիշատակում են իմաստուն վարդապետներ՝ Սահակ Պարթևի ու Մեսրոպ Մաշտոցի տօնը: Իսկ, իւրաքանչիւր տարու ալ Հոկտեմբերի 14-ին՝ տօնախմբում են Սահակ Պարթևի ու Մեսրոպ Մաշտոցի թարգմանիչ աշակերտների «Թարգմանչաց» կոչուած տօնը:

Արմինա-Հայաստանում մարտի էր յուշը՝ Արամէ արքայի Արա-Արաեան տոհմից Սարտուրի Ա. Թագաւորի որդի Անուշաւան-Իշպուլի-ի: Ասորեստանի արքունիքում պատանդ եղած ատեն շփուել էր պալատի գիտական-գրական շրջանակների հետ, ծանօթացել «Սեպագրութեան» արուեստի հնարքներին: Խօսքով ու գործով հանճարեղ Իշպուլի-ի-Անուշաւան Արմինա Թագաւորը՝ նշանաւորուել էր որպէս իմաստուն քուրմ-արքայ: Իր հանճարեղ մտալոյացումով, Ասորեստանի 3000 սեպագիր խրթին նշանների համակարգը խիստ կրճատել էր, ապա ստեղծել իր թագաւորած Արմինա երկրի մայրենի լեզուի միայն վեց հարիւր սեպագիր նշանակագրերով խօսուն տարբերակը: Իշպուլի-ի թագաւորը, իրենց Արմինա երկրի նախնիների խօսակցական լեզուն վերածել գրաւոր լեզուի: Իշպուլի-ի ու Արա-Արաեան տոհմի նրա յաջորդ գահակալները, այդ նոր սեպագիր գրերով կատարել իրենց նուաճումների արձանագրութիւնները, լեզուն էլ Ասորերէնի փոխարէն իրենց երկրի մարդկանց խօսած լեզուով: Այդ այն լեզուն էր, որ հազարհազար տարիներ յետոյ էլ Արմինա երկրի մարդիկ պիտի խօսէին, Հայերէն Գրաբար լեզուն էր: Արմին որոշ պատմաբաններ, օտարի խօսքով դեռեւս շարունակում են Արմին Արամէ-Արամ Թագաւորի հիմնադրած համադաշնային Արմինա պետութիւնը Ուրարտու անուանել:

Այդպէս էր, որ Տուշպա-Վան ոստանի միջնաբերդ տանող քարէ դրան ժայռին գրել են իրենց «Հաշտից» ցուցակի անունները, գլխաւորութեամբ իրենց միաստուածութեան գաղափարը խորհրդանշող Խալդէ-Հայկ աստուծոյն: Դուռ, որ իրենց հեռու Սասուն երկրի նախնին վշտացած աշխարհից, իր նժոյգով մտել քարանձաւ, այն իր վրայ փակել: Քրմական պատգամախօս Անուշաւան-Իշպուլի-ի արքան, սօսեաց անտառակի ծառերի սօսափիւնից արդեօք չէ՞ր գուշակել, որ թամբած ձին հեծած իրենց նախնին պատուելու էր քարէ դուրը, խաղաղութեան ու սիրոյ լոյս վառելու աշխարհի մարդկանց սրտերին:

Մարել էին նաեւ Արմինա երկրի նախնիների հաւատքի գերագոյն աստուծոյ ատենադպիր, արուեստների, բանաստեղծութեան, դպրութեան, գիտութիւնների, գրի հովանաւոր Տիր աստուծոյ ուսմունքի իմաստութեան յուշը: Ասացէ՛ք, ատենադպիրը առանց գրերի

կը լինէ՞ր...: Արմինա երկրի մարդկանց բանաւոր խօսքը՝ «Գրաբար» ոսկեղենիկ Հայերէն լեզուն էր՝ նրա հետ առընթեր դպրոցներում ուսուցանել էին նաեւ Յունարէն, Ասորերէն, Պարսկերէն:

Հայոց Խոսրով Մեծ Գ. Թագաւորի ատեն արքունիքում ծառայել էր Մեսրոպ անունով մի գեղջուկ Արմին-Հայ մարդ, որը 361 թուականին ծնուել էր Տարօն գաւառի Հացեկաց գիւղում, որդին Վարդան անունով քրմապետի: Մանկութեան տարիքում լաւ կրթութիւն էր ստացել, ուսանել Յունարէն, Պարսկերէն, Ասորերէն լեզուներ, երեւի Ներսէս Մեծ կաթողիկոսի հիմնադրած դպրոցներից մէկի աշակերտն եղել: Ծննդավայրի դպրոցում ուսումը աւարտելուց յետոյ գնացել Այրարատ նահանգ, արքունիքում գինուորական ծառայութեան մտել: Ժամանակի հանրաճանաչ լեզուներին տիրապետող տարօնցու հոգում չէր մարել գրասիրութիւնը, ջանասէր աշխատասիրութեան շնորհիւ դարձել թագաւորական դիւանի դպիր-գրագիր: Արքունիքում ծանօթացել էր աշխարհիկ կարգերի հետ, գրագրի պաշտօնով վարչական աշխարհն էր իր առաջ բացուել: Տարօնցի Մեսրոպի համար այն երկրի քաղաքական ու ներքին կեանքը ճանաչելու լաւ առիթ հանդիսացել: Պալատում պաշտօնավարութիւնը չէր բռնադատել Մեսրոպի հոգին: Նոյն Խոսրով Մեծ Գ. Թագաւորի ատեն, նորէն ասպարէզ էր ելել Լուսաւորչի տոհմը, կաթողիկոսական աթոռին բազմել էր Սահակը: Նրա վարած ճգնաւորական կեանքը մեծ ազդեցութիւն էր գործել արքունի դիւանի դպիրի վրայ: Մեսրոպ թողել էր դպիր-գրագրի պաշտօնը, հոգեւորականի կոչում ստանալով սկսել ճգնաւորական կեանք վարել:

Մեսրոպ ճգնաւորը չէր հեռացել աշխարհից, մարդկանցից, աղօթքով հոգու փրկութիւն չէր որոնել: Հաւաքել էր աշակերտներ, նրանց միտքը լուսաւորելու համար քրիստոնէութիւն քարոզել: Խորենացին վկայել էր, որ Մեսրոպը եկեղեցիներում ժամերգութիւնը կատարել էր Ասորերէն գրքերից, յետոյ էլ այն Հայերէն թարգմանել: Մեսրոպը, իր առաքելութիւնը իրականացրել էր նաեւ Հայոց աշխարհի արեւելեան ծայրամասի գաւառներում, որտեղ անկարգ վիճակ էր տիրել: Սիւնիքի ու Արցախի լեռների անմատչելի բարձրութիւնները, կլիմայական խիստ պայմանները բնակիչների համար մեկուսի կեանքի վիճակ ստեղծել, պահպանել էին իրենց հնապաշտ աւանդութիւնները: Նման պայմաններում պայքարել էին իրենց ապրուստը հոգալու, մտաւոր կեանքի պահանջ չէր եղել:

Մեսրոպ իր քարոզչութիւնը սկսել էր Սիւնեաց աշխարհի Գողթան գաւառից, նրա մարդկանց միտքը պայծառ ու լուսաւոր եղել, հաւատարիմ մնացել իրենց հին աստուածների հաւատքի իմաստութեանը, իրենց հին աստուածների բնութեան երեւոյթների պաշտամունքին: Գողթան գաւառը, նախնիների աստուածների պաշտամունքի, իրենց հերոսների մաքառումների աւանդապահը, իրենց հաւատքի ոգեւորող եղել: Նրանց բանաստեղծական յորինումներում Արմին-Հայերի իմաստութեան լոյ-

սի բոցերն էին ճառագում: Այն վերածուած էր երգի, պահում իրենց անցեալը, չէին թողել մեռնէր իրենց քաջ նախնիների յուշը: Մովսէս Խորենացին, նրանց երգերի ու բանահիւսութեան մի քանի պատուիրակներ էր հաղորդել՝ Արտաշէսի ու Սաթենիկի ամուսնութեան հանդէս, Վահագնի ծնունդ...: Վահագն ծով, շրջակայ լեռների գաթաթների հրաբուխներից ժայթքած կրակալոյսը ջրեր իջնում, երկնում էր երկինքը, երկնում էր երկիրը, երկնում էին հրաբխային գոտի կապած Վանայ ջրերը, երկունք բռնած կարմրալոյս եղեգնիկից ելած բոցից ծնուած իրենց Վահագն աստուածը՝ կրակից ու ջրից ծնուած Հայ նախնի աստուած: Պատառիկներ էր փրկել Մովսէսը, հապա եթէ նրանց այրած չլինէին... բանաստեղծութեան ինչքան գոհարներ կը պարգեւէինք աշխարհի մարդկանց:

Մեսրոպ... այդ լեռներում դիմադրաւել էր իրենց նոր հաւատքի քարոզչութեան անհարկութիւնը, դիմել տեղի իշխանների աջակցութեանը: Կորիւն այսպէս էր գրել իր «Վարք Մաշտոցի» մատենանում՝ «Այն ժամանակ Աստուած տուեց, որ Սիւնիքի իշխանութեան գլուխն անցաւ քաջ Սիսական Վասակը, խելացի ու հանճարեղ եւ կանխագէտ, աստուածային իմաստութեան շնորքով օժտուած մի մարդ, նա շատ նպաստեց աւետարանի քարոզչութեանը»: Քրիստոնէութեան քարոզչութիւնը կատարուել էր հրամանով, գինուժի իշխանութեան պարտադրանքով: Նրանից հարիւր տարիներ առաջ էլ իշխանական գորութեան բուն ուժով Արմինա-Հայաստան երկրում իշխել էր օտար հաւատքը: Մեծ Հայք երկրի մարդիկ, իրենց հաւատքի պաշտպանութեան համար հարկը տարիներ կուլ էին տուել իշխանութեան բռնութեանը, պարտուել էին, սպաննել, դաւանափոխ արել քրմական դասին, քանդել նրանց աստուածների մեհեանները, յափշտակել տե-

ղի գանձերը, ոչնչացրել գիր, երգ, աշխարհի ու տիեզերքի ընկալման իմաստութեան մատենաներ: Կրօնքափոխ էին արել Մեծ Հայքին, հաւատքն էր օտար, թագաւորը օտար:

Մեսրոպ... իմաստուն, զգայուն սիրտ ունէր, «Տրամութիւն է ինձ, իմ սրտի ցաւերը անպակաս են իմ եղբայրներին ու ազգականներին համար» պիտի խոստովանէր իմաստունը: Մտորել էր թէ ինչու էր հայրենի երկրում անգթութիւն ու հարկադրանք կատարուել, մարդու համար հարազատ էր այն, ինչ հասկանում էր, ինչին պաշտամունք ունէր: Համոզուել էր, որ քարոզչութիւնը իզուր էր, մանկանց սրտերում փոքրուց պիտի սերմանուէր իրենը, ոչ թէ օտարինը: Կիսատ թողել սկսած գործը, վերադարձել Վաղաշապատ, միտք էր ծագել «Գիր» ստեղծել իր ազգի մտքի լուսաւորութեան համար:

Մեսրոպ... դիմել էր Հայոց կաթողիկոս Սահակին: Հայաստանում ամէնազարգացած մարդն էր նա: Սիրով ու մեծ ակնածանքով էր ընդունել նրան, ինքն էլ նոյնը մտածած ու եզրակացրած եղել: Ի դէմս Սահակ կաթողիկոսի՝ Մեսրոպ հովանաւոր ու աջակից էր գտել: Հայաստանում Արշակունեաց տիրապետութեան նախավերջին թագաւոր Վուսնայակու արքան միացել էր նրանց, որը նոյնպէս զգացել էր ժամանակի պահանջը: Նրա թագաւորութեան շրջանին Հայաստան երկիրը խաղաղուէր էր: Ժողովուրդի գոյութեան յարատեւութիւնը պահպանելու համար հարկաւոր էր մի միջոց գտնել, որը ապրէր մարդկանց սրտերի ու մտքերի մէջ: Կաթողիկոսարանում խորհրդածութիւններ եղել, յայտնի էր դարձել, որ ձեռնարկուելիք գործը դժուար էր, մասնակիցներից ոչ ոք նրա կատարման իրագործմանը առաջարկութիւն արել:

(Շարունակելի)



### Ի՞նչ Պատճառներով Տղամարդիկ Կ'արհամարհեն Այն Կիները, Որոնք Իրենց Համար Հաճելի Են

1) Ոչ-իտեղալական ըլլալու զգացողություններն: Այո՛, տղամարդը կրնայ վստահ չըլլալ, որ քեզի համար իտեղալական տարբերակ է: Ան կրնայ ըլլալ շատ սիրահարուած, բայց միաժամանակ գիտակցիլ, որ քեզի համար բաւականաչափ լաւ չէ: Կամ ալ, հակառակը, կրնայ զգալ, որ այնքան ալ սիրահարուած չէ, հե տեւաբար կրնայ քեզի համարել ոչ-իտեղալական: Ամէն պարագայի, ձեզմէ մէկուն անկատարութիւնը կրնայ պատճառ դառնալ, որ ան խուսափի յետագայ յարաբերութիւններէն:

2) Պատրաստ չէ մերժման: Ասիկա ցած ինքնագնահատական ունեցող, անվստահ տղամարդոց մէջ տարածուած խնդիր է: Դու անոր համար հաճելի ես, բայց ան այնքան կը վախնայ, որ չի կրնար պատշաճ տպաւորութիւն ձգել վրայ, որ կ'որոշէ առհասարակ սառեցնել իր զգացմունքները: Տուեալ իրավիճակի մէջ լուծումը կրնայ ըլլալ միայն առաջինը նախաձեռնութիւն դրսեւորելը:

3) Անվստահութիւն՝ յարաբերութիւններու անհրաժեշտութեան հարցով: Այսպէս կոչուած «ե՛ւ կ'ուզէ, ե՛ւ կը վախնայ» ասիկա այն դէպքն է, երբ տղամարդը վստահ չէ, որ կեանքի տուեալ պահուն իրեն պէտք են յարաբերութիւնները: Ու եթէ ան իրօք ազնիւ մարդ է, ուստի հեռու կը մնայ այդ յարաբերութիւններէն, որպէսզի ապագային աւելի շատ սխալներ չգործէ:

4) Խորամանկ խաղ: Եթէ տղամարդը կը ձեւացնէ, որ տուեալ կինը չի նկատեր ու միտումնաւոր կ'արհամարհէ, կնոջ համար ամենահաճելի պատճառը այն պիտի ըլլար, որ ան այդպէս կ'ուզէ աւելի շատ բոլորքէլ կնոջ հետաքրքրութիւնը: Իբրեւ կանոն, նման խաղերը կ'աւարտին բոլոր սիրային յարաբերութիւններով: Այնպէս որ՝ ընտրութիւնը քուկդ է:

Առողջ սիրոյ սկզբունքները - Երբ երկու մարդ կը սկսին առողջ յարաբերութիւններ՝ անոնցմէ իւրաքանչիւրին կեանքը պէտք է բարելաւուի: Իսկ եթէ ասիկա տեղի չ'ունենար, ուրեմն նման միտումնաւորութիւնը վաղ թէ ուշ կը խզուի:

Թիւնը վաղ թէ ուշ կը խզուի:

- Ճիշդ ու ներդաշնակ յարաբերութիւններու պարագային երկու գուզընկերներն ալ հաւասարաչափ կա խում ունին իրար մէ: Իսկ եթէ դուք կը զգաք, որ չէք կրնար ապրիլ առանց այդ մարդու, որ միայն մասամբ ձեզի կը պատասխանէ նուիրուածութեամբ ու միասին ըլլալու ցանկութեամբ, ուրեմն ան չի կրնար ըլլալ ձեր երկրորդ կէսը:

- Սիրող մարդը չի պահանջեր իր գուզընկերոջմէ պատասխան զգացմունքներու ապացոյցներ: Ան ինք կ'ապացուցէ իր սէրը ու կը զգայ պատասխան սէր իր երկրորդ կէսին կողմէ:

- Եթէ յարաբերութիւններուն մէջ դուք գիտակցաբար խանդ կ'առաջացնէք ձեր գուզընկերոջ մօտ, ուրեմն այդ յարաբերութիւնները ձեզի համար հաճելի չեն: Մարդիկ առանց այդ ալ հակուած են խանդի, երբեմն անոնք բաւականաչափ ինքնավստահ չեն, ասոր համար ալ պէտք է միտումնաւոր առաջացնել խանդ ձեր գուզընկերոջ մօտ:

- Զգուշացէ՛ք գուզընկերը դաւաճանելու ցանկութենէն: Եթէ դուք գինք վերածէք այլ անձնաւորութեան, յիշեցէ՛ք, որ հաւանաբար այդ նոր անձնաւորութիւնը այլեւս չուզէ մնալ ձեր հետ:

- Սէրը պէտք է երջանկացնէ մարդը: Եթէ դուք բոլորին կը պատմէք, թէ ինչպէս կը սիրէք ու ինչ լաւ կը զգաք ձեր յարաբերութիւններուն մէջ, բայց միաժամանակ մշտապէս վատ տրամադրութիւն ունիք ու վշտացած էք, ուրեմն արժէ մտածել՝ արդեօ՞ք ասիկա իսկական սէր է:

- Իբրեւ կանոն՝ տղամարդիկ իրենց առաւել յորմարաւէտ կը զգան այն գուզընկերներուն հետ, որոնք հաւասար են իրենց հասարակական դրութեամբ ու միաժամանակ իրենց հոգեբանական հակապատկերն են: Այլ խօսքով՝ ձեզի ամենաշատը կը համապատասխանէ կրթութեան ձեր մակարդակը ու նոյնատիպ ծագում ունեցող մարդը:

րէն: Միայն այն, որ դուք անհամաձայնութիւններ ունիք, չի նշանակեր, որ սխալ էք: Երբեմն պէտք է վստահիք դուք ձեզի, ուշադրութիւն դարձնէք ձեր ներքին ձայնին եւ հետեւիք ձեր ուղիին:

3) Ձեզի խորհուրդ է հարկաւոր այն մարդէն, որ հիացմունք կ'առաջացնէ ձեզի եւ որ ունի հարուստ կենսափորձ: Օրինակ, եթէ նիւթական խնդիրներ ունիք, առանց վարանելու հարցուցէ՛ք խորհուրդը անոր, որ յաղթահարած է այդպիսի խնդիրն:

երաժշտութիւն լսելը կ'օգնէ շեղելու անհանգստացնող մտքերէն: Շատ կարեւոր է, որ երաժշտութիւնը հաճելի թուի ունկնդրողին: Եթէ դասական երաժշտութիւն լսելով գլուխդ կը ցաւի, աւելի լաւ է չտանջէք ձեզ եւ ընտրէք ձեր սիրած ստեղծագործութիւնը:

### Հինգ Բան, Որոնք Ուժեղ Կանայք Չեն Հանդուրժեր Յարաբերութիւններու Սէր

1) Արդարացումներ-Եթէ որեւէ բան այնպէս չի դասաւորուիր մէկ-երկու անգամ, ասիկա դեռ կարելի է հասկնալ, բայց մշտապէս արդարացումները անընդունելի են: Ուժեղ կանայք կ'ընդունին ներողութիւնները, բայց գիտեն, թէ երբ պէտք է դադարիլ ընդունիլ զանոնք եւ հեռանալ:

2) Տգեղ տարօրինակութիւններ- Ուժեղ կինը չի հանդուրժեր այն տղամարդը, որ ժամադրութիւնը վերջին վայրկեանին չեղեալ կը յայտարարէ, երբ կինը, արդէն հագած պատրաստ տունէն պիտի ելլէ: Ան պէտք ունի այնպիսի խոստումներու, որոնք պիտի կատարուին:

3) Անյարգալից վերաբերմունք- Ուժեղ կանայք գրաւիչ կը դարձնէ յարգանքը, գոր անոնք ունին սեփական անձին հանդէպ:

### Մարդոց Մեծամասնութեան Շարժող Ուժը Նախանձն Է

Հետազոտողները եկած են այն եզրակացութեան, որ մարդոց 90%-ը կարելի է բաժնել 4 հիմնական հոգեբանական տեսակներու՝ լաւատեսներ, յուստեսներ, վստահող եւ նախանձող:

Կը նշուի, որ վերջին տեսակը ամենալաւաբար հանդիպողն է: Կամաւորներու հետ իրականացուցած խաղի մը իբրեւ արդիւնք պարզուած է, որ ամենամեծ խումբը՝ 30%, կազմած են մարդիկ, որոնց համար շարժիչ ուժը եղած է նախանձը: Այս խումբին համար կարեւոր է, թէ ինչի հասած են անոնք, կարեւորը՝ արդիւնքը պէտք է ուրիշներէն լաւ ըլլայ:

Մնացեալները՝ լաւատեսները, յուստեսները եւ վստահողները կազմած են 20%: Լաւատեսները հակ-

Անոնք երբեք չեն հանդուրժեր, որ ստորացնեն զիրենք: Եւ եթէ տղամարդը կ'արտօնէ նման ձեւով վարուել կնոջ հետ, ան ինքզինք բաւականաչափ կը չարգէ, որպէսզի հեռանայ:

4) Վերահսկողութիւն- Ուժեղ կանայք անկախ են: Անոնք ունին իրենց կեանքը, եւ տղամարդը միայն ատոր մէկ մասն է: Անոր պէտք չէ ըսել, թէ ինչ պիտի ընէ, իսկ ինչ՞ ոչ, ուր պէտք է երթալ, իսկ ուր՞ ոչ, ինչ պէտք է հագուել, եւ ինչ՞ ոչ: Ուժեղ կինը կարելի է վերահսկել:

5) Բաւարարուելի քիչով- Ուժեղ կանայք գիտեն, թէ ինչ կ'ուզեն եւ կը փնտռեն այդ նոյն որակներով մարդիկ: Հաւանաբար անոնց պահանջները մեծ են, բայց գիտեն իրենց գինը եւ քիչին չեն համաձայնիր:

ուած են հաւատալու, որ իրենք եւ իրենց գործընկերները միշտ կը կատարեն լաւագոյն ընտրութիւնը: Յոռետեսները սովորաբար կը կարծեն, թէ իրենք պէտք է ընտրեն երկու վստահողն է, իսկ վստահողները միշտ պատրաստ են համագործակցութեան եւ անոնց չի յուզեր՝ պիտի յաղթե՞ն իրենք, թէ՞ ոչ:

Հինգերորդ, անորոշ խումբի մը մէջ յայտնուած է մասնակիցներու 10%-ը: Անոնց վարքագիծը հնարաւոր չէ եղած պարզել: Անոնց գոյութիւնը թոյլ տուած է հետազոտողներուն եզրակացնելու, որ, բացի չորս հիմնական տեսակներէն, կան նաեւ այլ տեսակներ, որոնց մէջ կը մտնեն ոչ-դասական վարուելակերպով մարդիկ:

### Գնշախաղ Բուժելու Գափոնցի Բժիշկի Տարբերակը, որ Արժէ Փորձել Ինքնուրոյն

Իրադարձութիւններով յագեցած ժամանակէն կեանքը յաճախ հոգեբանօրէն կը ջլատէ մեզ, ան տարբեր կը դարձնէ շրջապատող միջավայրին հանդէպ, որուն հետեւանքը կրնայ դառնալ ճնշախաղ: Նման պարագաներու կրնաք որոշ ժամանակով մը կտրուել աւօրեայ հոգեբան, վազքէն ու զբաղիլ ճափոնցի բժիշկին նշեալ բուժումով: Անիկա բաղկացած է 4 փուլէ, որ կարելի է իրականացնել միայն զամայն ինքնուրոյն:

Առաջին փուլ: Հարկաւոր է մէկ ամբողջ շաբաթ անցընել առանձին, մենութեան մէջ: Այս ընթացքին կարելի չէ փողոց ելլել, ցանկալի է անկողնային վիճակ պահպանել: Անկողնային ելլել միայն բնական կարիքները հոգալու համար: Կարդալ, գրել, հեռատեսիլ դիտել, շփուել նոյնպէս կ'արգիլուի: Այս ընթացքին պէտք է ամբողջովին հանգստանալ, լսել ներքին ձայնդ, մոռնալ ունայնութեան մասին:

Երկրորդ փուլ: Երկրորդ փուլով կարելի է անկողնային, ինչու չէ նաեւ տունէն ելլել, տնային թեթեւ գործերով զբաղիլ: Կարելի է նաեւ օրագիր պահել եւ գրել կուտակուած մտքերը: Սակայն խօսիլ դարձեալ կ'արգիլուի:

Երրորդ փուլ: Հիմա քրտինքը երեսին աշխատելու ժամանակն է: Ուղիղ իմաստով: Շատ լաւ տարբերակ է այդքին մէջ աշխատելը, հող փորելը: Ֆիզիքական աշխատանքի շնորհիւ մարդը ձեռք էր բերէ վստահութիւն սեփական ուժերուն հանդէպ, կ'ազատուի հոգեկան տանջանքներէն:

Չորրորդ փուլ: Այս փուլով տեղի կ'ունենայ վերադարձը սովորական կեանքին: Կարելի է սկսիլ հանդիպիլ ընկերներու հետ, այցելել թանգարաններ, թատրոն: Ասիկա վերջնական բուժման փուլն է, երբ բոլոր խնդիրները կը դառնան անցեալ եւ կեանքը կը սկսի փայլել մաքրուած գոյներով:

### Ստացէք Կեանքի Կարճ Խորհուրդ՝ Ընտրելով Նկարի Գուճեղճ Մէկը

1) Դուք շատ ժամանակ անցուցած էք առանց արեւի շողերու եւ լոյսի, որոնք կը տաքցընէին ձեզ: Քիչ մը մաքուր օդ եւ արեւ. ահա այն, ինչ անհրաժեշտ է ձեր մտքին, մարմնին ու հոգիին: Եթէ ասիկա հնարաւոր է, մօտակալ օրերուն, քանի մը շաբթուան ընթացքին յաճախ դուրս ելէք:

2) Մի վախնաք անկախ մտածող ըլլալէն: Դուք կրնաք բախիլ այնպիսի իրավիճակներու, երբ ձեր մտքերը, հայեացքներն ու համոզմունքները կը տարբերին միւսներէ:

### Երաժշտութիւնը Կ'օգնէ Պայքարելու Անքնութեան Դէմ

Անքնութեան դէմ պայքարելու համար ամէնէն շատը կ'օգնէ դասական երաժշտութիւնը, սակայն գիտնականները պարզած են, որ ամենակարեւորը սիրած երգերը լսելն է, որ պէտք է լսել 45 վայրկեան:

Հետազոտողները կը նշեն, որ

Յայտնի է, որ երաժշտութիւնը մարդոց վրայ որոշ ազդեցութիւն կ'ունենայ: Եւ գլխաւորը ոչ միայն անոր ոճն է, ուրիշը կամ թոնը, այլեւ գործիքը, որմով զայն կը նուագեն: Նշենք, որ գործիք մը

նուագելը նոյնպէս դրական ազդեցութիւն կ'ունենայ. օրինակ, դաշնակ նուագելը կը նպաստէ հոգեկան վիճակի ներդաշնակեցման: Երաժշտութիւնը կ'օգնէ պայքարելու ծանր գլխացաւի եւ այլ ցաւերու դէմ:



# ՄԱՐՉԱԿԱՆ

## Հայ Սարգիկները 4-րդ Ոսկե Մետալն են Նուաճել Թուրքիայում



Հայաստանը 4-րդ ոսկե մետալն է նուաճել Թուրքիայում ընթացող բազկամարտի աշխարհի առաջնությունում:

ՀԱՕԿ լրատուականից յայտնում են, որ մրցումների 4-րդ օրը Հայ մարզիկներից պատուոչ հարթակ է բարձրացել ինչպես Սարգիսյանը, ով յաղթելով իր բոլոր մրցակիցներին, հռչակուել է աշխարհի ախոյեան:

## Ռուսաստանի Ներկայացուցիչները՝ Երեւանեան Սարաթոնի Յաղթողներ



Ռուսաստանի ներկայացուցիչների յաղթանակով աւարտուեց Երեւանի 2800-ամեակին նուիրուած մարաթոնեան վազքը: Երեւանեան մարաթոնը միջազգային էր. մասնակցուած էր 40 երկրի 2800 վազորդ: Վազորդների մեծամասնութիւնը պրոֆեսիոնալ մարզիկներ էին: Մասնակիցների շարքերում էին նաեւ աթլետիկայի Հայաստանի հաւաքականի անդամները:

#Yerevan2800 տօնակատարութիւնների շարքում մարաթոնեան վազքն ամենամեայ մարաթոնից տարբերուեց. այս տարի առաջին անգամ վազորդները յաղթահարեցին Հայաստանում անցկացուող մարաթոնների մէջ ամենաերկար մրցատարածութիւնը՝ 42,2 կմ, որի յաղթողները ճանաչուեցին տղամարդկանց պալքարում՝ ռուս վիկտոր Խախուդակին 02:56:47 արդիւնքով: Կանանց պալքարում՝ ռուսաստանաբնակ Քրիստինէ Վարդանեանը 03:38:51 արդիւնքով: Ամենաերկար մրցատարածութեան յաղթողները պարգեւատրուեցին գումարներով՝ 375 հազարական դրամ:

## Հայազգի Թենիսիստ Կարէն Խաչանովը՝ «Կրեմլի Գաւաթի» Յաղթող

Ռուսաստանի Դաշնութիւնը ներկայացնող հայազգի թենիսիստ Կարէն Խաչանովը Կրեմլի օրը յաղթել է «Կրեմլի գաւաթի» եզրափակիչում՝ առաւելութեան հասնելով ֆրանսացի Ադրիան Մանարինոյի հանդէպ:



Խաչանովը եզրափակիչի ամբողջ ընթացքում ճնշող առաւելութիւն է ունեցել մրցակցի հանդէպ՝ յաղթանակի հասնելով ընդամէնը 55 ըոպետում՝ 6:2, 6:2 հաշուով:

«Խաղային այն որակները, որոնք ես կարողանում եմ ցուցաբերել վերջին շրջանում, ինձ ուրախացնում են: Ամէն մի խաղից յետոյ ես աւելի լաւ արդիւնք եմ արձանագրում», - յայտարարել է Խաչանովը:

## Անգլիայի Առաջնութիւն «Արսենալը» Տարաւ 7-րդ Անընդմէջ Յաղթանակը

Ֆուտբոլի Անգլիայի առաջնութեան 9-րդ տուրի վերջին խաղում Լոնդոնի «Արսենալն» ընդունեց «Լեսթերին» եւ կամային յաղթանակ տարավ 3:1 հաշուով: Ունաի Էմերիի գլխաւորած թիմը 7-րդ անընդմէջ յաղթանակը տարաւ Պրեմիեր լիգայում:



Հայաստանի հաւաքականի 29-ամեայ կիսապաշտպան Հենրիխ Մխիթարեանը խաղը սկսել էր «Արսենալի» մեկնարկային կազմում: Այս յաղթանակից հետո «Արսենալը» հաւաքեց 21 միաւոր ու «Չելսիի» եւ «Տոտենհեմի» հետ բաժանուած է 4-6-րդ տեղերը: Առաջատարներ «Մանչեսթեր Սիթին» ու «Լիվերպոլն» ունեն 23-ական միաւոր:

## Սալահի Կոլը Յաղթական էր

«Լիվերպոլը» հիւրընկալուելիս նուազագոյն հաշուով առաւելութեան հասաւ «Հադերսֆիլդի» նկատմամբ: Հիւրերի յաղթական կոլն առաջին խաղակէստում խփեց եգիպտացի յարձակուող Մոհամեդ Սալահը: Այս յաղթանակից յետոյ Յուրգեն Կլոպի գլխաւորած թիմը վաստակեց 23 միաւոր եւ հաւասարուեց մրցաշարային աղիւսակը գլխաւորող «Մանչեսթեր Սիթին»:

## «Չելսին» Վերջին Վայրկեաններին Փրկուեց «Մանչեսթեր Եունայթեդի» դէմ խաղում

9-րդ տուրի կեդրոնական խաղում Լոնտոնի «Չելսին» ընդունեց «Մանչեսթեր Եունայթեդին» եւ պարտութիւնից փրկուեց աւելացուած 6-րդ ըոպէին: Գրանցուեց 2:2 հաշիւը: Խաղի հաշիւը 21-րդ ըոպէին բացեց «Չելսիի» գերմանացի պաշտպան Անտոնիօ Ռիւդիգերը, որը խփեց առաջին խաղակէսի միակ կոլը: Ընդմիջումից յետոյ ֆրանսացի յարձակուող Անտոնի Մարշիալը դարձաւ դուբլի հեղինակ եւ առաջ մղեց մանչեսթերցիներին, սակայն հիւրերին չչափողուեց պահպանել յաղթական հաշիւը: 96-րդ ըոպէին «Չելսին» պարտութիւնից փրկեց փոխարինման դուբա եկած Ռոս Բարկլին:

## «Մանչեսթեր Սիթին» խփեց 5 կոլ

Առաջատար «Մանչեսթեր Սիթին» տանը 5 անպատասխան գնդակ ուղարկեց «Բարնլիի» դարպասը: Մանչեսթերցիների կազմում 58-րդ ըոպէին փոխարինման դուբա եկաւ բելգիացի կիսապաշտպան Կեւին դէ Բրուլնէն, որն առաջին հանդիպումն անցկացրեց վնասուած քից յետոյ: Դէ Բրուլնէն խաղադաշտից բացակայում էր Օգոստոսից, երբ ստացել էր ծնկի վնասուածք:

## Մեսին Զի Խաղայ 3 Շաբաթ եւ Բաց կը Թողնի Նաեւ «Էլ Կլասիկոն»

«Բարսելոնայի» արժենթինացի յարձակուող Լիոնել Մեսին ձեռքի վնասուածքի պատճառով խաղադաշտից կը բացակայի նուազագոյնը 3 շաբաթ, յայտնում է կատալոնական ակումբի կայքը:



Դա նշանակում է, որ 31-ամեայ ֆուտպոլիստը չի մասնակցի նաեւ Մադրիդի «Ռեալի» դէմ խաղանական Պրիմերայի յաջորդ տուրի խաղին, որն անցկացուելու է Հոկտեմբերի 28-ին Բարսելոնայում: Նա կարող է բաց թողնել կատալոնական ակումբի յաջորդ 6 խաղերը:

Մեսին վնասուածք էր ստացել «Սեւիլիայի» դէմ Սպանիայի առաջնութեան 9-րդ տուրի խաղում (4:2), որում փոխարինուել էր 26-րդ ըոպէին: Նա ձեռքը վնասել էր «Սեւիլիայի» կիսապաշտպան Ֆրանկօ Վասկեսի հետ պալքարելիս: Խաղի ժամանակ Մեսին տեղափոխուել է հիւանդանոց, որտեղ նրա մօտ ախտորոշուել է ձեռքի կտրուածք:

Յիշեցնենք, որ արժենթինացի յարձակուողը «Էլ Կլասիկոների» պատմութեան լաւագոյն ռմբարկուն է եւ 18 կոլ է խփել «Ռեալի» դէմ խաղերում:

Ձեր Ծանուցումները Վստահեցէք «Մասիս» Շաբաթաթերթին

Ծախու է Լիբանանահայ մտաւորական «Նայիրի» ամսագրի ակաճաւոր խմբագիր Անդրանիկ Ծառուկեանի «Նայիրի» ամսաթերթերու 1958-1975 տարիներու լաթակազմ հաւաքածոները: Հետաքրքրուողներէն կը խնդրուի հեռաձայնել՝ Վահէ Աջապահեանի՝ (626) 354-5924:



### Մատարո Կ. Գրիգորեան

Շարունակուած էջ 7-էն

այլեւ իր արժանի տեղը զբաղեցնի Հայաստանի ժողովրդական նուագարանային մեծ ընտանիքում, միջոցներ է ստեղծում գործիքի երկարակեցութեան համար, աշակերտներ է կրթում աշխարհի տարբեր երկրներում: Այդպիսով, նրա շնորհիւ քամանչան կտրուած-անցնում է Հայաստանի սահմանները եւ տարածուած ու արմատներ գցում սփիւռքի հայ երաժշտասէրներին սրտերում: Իր պրոֆեսիոնալ խորհուրդներով նա անմնացորդ օգնում է սկսնակ եւ անփորձ երաժիշտներին, ղեկավարում ժողովրդական անսամբլային փոքր խմբեր եւ նպաստում հայ աւանդական երաժշտութեան տարածմանը աշխարհով մէկ:

### Իրաքահայերու Հայ Ընտանեկան Վարժարան

Շարունակուած էջ 8-էն

օրեայ վարժարաններէն ներս, որ տէրը պիտի ըլլայ իր ազգային բոլոր սրբութեանց եւ ժառանգութեանց եւ ջանակիրը պիտի ըլլայ մեր սուրբ թարգմանիչներու անմահ գործերուն եւ կտակին:

Փոքրիկներու կատարումներէն ետք խօսք առաւ հոգաբարձութեան ատենապետ՝ Խաչիկ Ճանոյեան: Ան ջերմ խօսքերով շնորհակտեց ներկայ ծնողները, դպրոցի անմասն կամաւոր 8 ուսուցիչ-ուսուցչուհիները, գլխաւորութեամբ նուիրեալ տնօրէնուհի՝ Անահիտ Խաչատրեանի ու մանաւանդ հանդիսութեան մասնակից 42 փոքրիկները:

Պրն. Ճանոյեան ուրախութեամբ ներկայացուց օրուան գլխաւոր բանախօսը, ազգային բեղուն գործիչ, հայ մամուլի աշխատակից, գիրքերու հեղինակ, ճարտարագէտ՝ Համբարձում Աղպաշեանը:

Պրն. Աղպաշեան իրեն յատուկ ջերմութեամբ առաջին իսկ վայրկեանէն հմայեց ներկայ ծնողները, ուսուցչական կազմը, դպրոցին փոքրիկները: Պրն. Աղպաշեան իր հիացմունքը յայտնեց փոքրիկներու ելոյթներուն, գնահատեց դպրոցի պատասխանատուները, իրաքահայերու ընտանեկան միութեան

իւնը, տնօրէնութեան եւ ուսուցչական կազմը իրենց այս հոյակապ աշխատանքին համար, «որ ինծի համար մեծ անակնակալ մըն էր», ըսաւ ան:

Ապա, Պրն. Աղպաշեան աշակերտներուն հասկնալի ոճով բացատրեց Մշակույթի ամսուան իմաստը, հայ մշակույթի դերը մեր ժողովուրդի գոյատեւման մէջ: Սրբոց թարգմանչաց կատարած մեծ, վիթխարի աշխատանքին մասին խօսելէ ետք, շնորհակտեց բոլոր ներկաները, «առանց ձեր գոհողութեան եւ նուիրումին դժուար պիտի ըլլայ այս գործը յառաջ տանիլ», ըսաւ ան:

Հանդիսութիւնը վերջ գտաւ աշակերտութեան եւ ծնողներու միաբերան՝ «Արդեօք ովքե՞ր են» հայրենաշունչ երգի կատարողութեամբ:

Ջերմօրէն կը շնորհակտեց իրաքահայերու ընտանեկան միութեան պատասխանատուները, որոնք 40 տարի շարունակ այս անվճար վարժարանը կրցած են պահել՝ 1700-է աւելի փոքրիկներու օգտակար ըլլալով, եւ առանց համահայկական կամ պետական կազմակերպութեամբ կամ հաստատութեան նպաստը ունենալու:

Բոլորին վարձքը կատար:

### Հայկազեան Համալսարանը Նշեց

Շարունակուած էջ 13-էն

40-ականներուն կը կոչուէր «Webb House» եւ առաջին կառուցը եղած է Հայկազեան համալսարանի ուսումնական առաքելութեան սկզբնաւորութեան: Անիկա գործածուած է միսիոնար էլիզապետ Ռէյչի կողմէ հայ աղջիկներու ուսումնական նպատակներու համար: Վերանորոգումը կատարուած է «Թուրքիանձեան ընտանիքի

կրթական ֆոնտ»-ի, «Սրբուհի եւ ձոն Քոնթէ ֆոնտ»-ի, Տաւրոս եւ Քրիսթինա Սիկելի եւ Օպեթի-Կիւրենլի ընտանիքներու նուիրատուութիւններով:

Ջերմ մթնոլորտի եւ Հայկազեան համալսարանի ուսանողներու կողմէ համաշխարհային երգիչ Շարլ Ազնաւուրի երգերու նուագով տեղի ունեցաւ ընդունելութիւն եւ շնորհակտորանքներու փոխանակում:

### Երեսունվեց Սանդուղներ Յաւերժութեան

Շարունակուած էջ 15-էն

եւ բարին իրենց կեանքի վերջին օրերին: Հասաւ պահը քարոզի, առաջնորդը վեր հանեց տառերի գիւտի իմաստն ու խորհուրդը եւ կոչ արաւ երկիրը թեմամբ պահել ու պաշտպանել մեր լեզուն, մեր մշակույթի արժէքները եւ նախանձախնդիր լինել այդ ճամբին: Սրբազան հայրը իր քարոզի մէկ հատուածում ասաց. «Հայերէն տառերը եղան այն 36 սանդուղները, որոնցով մեր ժողովուրդն առաջնորդուեց դէպի յաւիտենականութիւն...», իրաւացի եւ իմաստուն բնութագրում: Սրբազանը խօսեց պարտականութիւններին, ընթացիկ եւ այլ հարցերի մասին, որոնց մասին վստահաբար «Ալիք»-ը անդրադառնալու է:

Եկեղեցու շրջափակում գրքերի ցուցահանդէսի սեղաններն էին շարուած գրքերով ծանրաբեռնուած՝ համայնքի տպագրութիւն: Ամէն տարի տեղի է ունենում այս ցուցահանդէսը 2000 թուականից ի վեր Սեպուհ սրբազանի նախաձեռնութեամբ: Սրբազանը զարկ է տուել կրօնական եւ դասական գրքերի հրատարակման:

Այս տարի եւս ըստ աւանդական սովորութեան եկեղեցական խորհուրդը հիւրասիրութիւն էր կազմակերպել եկեղեցու սրահում հրաւիրելով քաղաքամասի ազգային մարմիններին եւ միութիւնների վարչութիւններին ներկայացուցիչներ ու ուսուցիչներ, նախկինում հիւրասիրութիւնը կատարուած էր դուրսը հիւրանոցում, յետագային եկեղեցին օժտուեց սրահով եւ գրասենեակներով ժամանակի եկեղեցու խորհրդի նախագահ՝ Խէչում Խէչումեանի օրօք: Միջոցառման հանդիսավար եւ խօսնակն էր եկեղեցու խորհրդի նախագահ՝ Արարատ Քեչիշեանը, նա պատշաճօրէն կատարեց իր պարտականութիւնը խմելով սրբազան հօր, թեմական մար-

մինների, քահանայից դասի, ուսուցիչների եւ ներկաների կենացը, եղան արտասանողներ եւ երգողներ: Տէր Կոմիտասը խմեց հանդիսավարի, պրն. Վարդան Վարդանեանի, Խէչում Խէչումեանի, իրար յաջորդող խորհուրդների եւ ուսուցիչների կենացը, նա խօսելով Սրբազանի մասին դրուատեց ծառայութիւնները: Արտայայտուեց բանաստեղծ եւ վաստակաւոր ուսուցիչ Ալմինը ի մասնաւորի խօսելով տառերի եւ նրա մեծ ու փրկարար դերի մասին, ի միջի այլոց տեղեկացրեց Սրբոց Թարգմանչաց եկեղեցու ի մօտոյ կատարուելիք յիսնամեակի հանդիսութեան մասին եւ ոգեւորութեամբ կարգաց եկեղեցուն ձօնած իր բանաստեղծութիւնը, ահա մէկ քառեակը չորսից՝

Եկեղեցին այս սուրբ շինութիւն է միայն,

Քրիստոսային հաւատամք ու հաւատք է խորին,

Ժողովուրդ է հայ, մարդկութիւն է համայն,

Մէր է, փրկութիւն, Աստուածութիւն է համայն:

Սրբոց թարգմանչաց եկեղեցին կառուցուել է 1968-ին համաշխարհային եկեղեցիների միութեան կողմից լուսահոգի Արտակ սրբազանի նախաձեռնութեամբ եւ ջանքերով, որի տօնը կատարուած է այդ թուականից:

Հանդէսի աւարտին օրհնութեան խօսք ասաց Սրբազանը, նա իր խօսքի շարանների մի հատուածում խորհուրդ տուեց դպրոցների ծնողական խորհուրդներին եւ ուսուցիչներին, որ ջանան պատարագին մասնակից դարձնել աշակերտութեան:

Կոկիկ կազմակերպուած հանդիսութիւն, այս տարի մի նորութիւն էր աւելացել, բակում եւս հիւրասիրութեան սեղան էր բացուել թէյով, սուրճով եւ խմորեղենով ներկաների համար:

Վարձքները կատար:

### ՀՀ Սփիւռքի Նախարարութիւնը Եւ ՀԲԸՍ

Շարունակուած էջ 14-էն

եւ գործնական վարժութիւններով հարուստ առցանց դասերու շնորհիւ դասընթացները դարձան հետաքրքիր եւ արդիւնաւէտ, իսկ բովանդակութիւնը յարմարեցուած էր ուսանողներու լեզուի իմացութեան մակարդակին: Ծրագրի աւարտին բոլոր մասնակիցները ստացան ՀՎՀ վկայական: ՀՎՀ-ն անոնց համար կազմակերպեց նաեւ ձեռնարկներու շարք՝ ներկայացնելու

լու համալսարանի ծրագիրները եւ առցանց կրթութեան հնարաւորութիւնները:

«Քայլ դէպի տուն» ծրագրի ներուժը բարձրացնելու նպատակով ՀՎՀ-ն մասնակիցներուն տուաւ ուսումնական շարունակելու եւ իրենց նախընտրած մէկ դասընթացին անվճար հիմունքներով մասնակցելու հնարաւորութիւն: Անոնցմէ քանի մը անձ արդէն գրանցուած են ՀՎՀ ուսումը շարունակելու համար:

**ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ**  
**ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ ԿՏՐՕՆ**

Yes, I wish to subscribe to Massis Weekly  
 Enclosed a check for (one year)  
 \* \$50,00 \* \$100,00 (first class) for USA  
 \$ 125,00 (Air Mail) for Canada.  
 \$ 250,00 (Air Mail) Overseas.

Name: -----  
 Address: -----  
 City: ----- State:----- Zip Code:-----  
 Country: -----  
 Tel:----- Email:-----

**OFFICE SPACE FOR RENT  
 IN PASADENA**  
**ՎԱՐՁՈՒ ԳՐԱՍԵՆԵԱԿՆԵՐ**  
 1060 North Allen Ave  
 Pasadena, CA 91104  
 Գրասենեակները վերանորոգուած  
 եւ յարմար վարձքերով  
 Հետաքրքրուողներէն հեռաձայնել՝  
 (626) 398-0506





ARMENIAN  
AMERICAN  
MUSEUM

**Building Together.  
Leaving a Legacy.**

Կառուցենք միասին:  
Թողնենք ժառանգություն:



## Join the *Groundbreaking Campaign!*



**Permanent  
Armenian  
Exhibition**  
Հայկական  
մշտական  
ցուցահանդես

**Traveling  
Multicultural  
Exhibitions**  
Բազմամշակութային  
շրջուն  
ցուցահանդեսներ

**Performing  
Arts  
Theater**  
Կատարողական  
արուեստի  
թատրոն

**Demonstration  
Kitchen**  
Ցուցադրական  
խոհանոց

**Learning  
Center**  
Ուսումնական  
կենտրոն

**Museum  
Archives**  
Թանգարանի  
արխիվներ

Գալիֆորնիայի Հայ-Ամերիկեան  
Թանգարանը եւ Մշակութային կեդրոնը  
պատմական շինություն է, որ կը  
կառուցուի Կլենտել քաղաքին մէջ:  
Կեդրոնը կը ներկայացնէ մեր  
պատմությունը, կը պահպանէ մեր  
մշակոյթը, եւ կը զօրացնէ մեր համայնքը:  
Մասնակցեցէ՛ք առաջին կարգի այս  
համաշխարհային եւ Մշակութային  
թանգարանի եւ կեդրոնի կառուցումին:

The Armenian American Museum and  
Cultural Center of California is a historic  
landmark developing in the City of  
Glendale. The center will share our  
story, preserve our culture, and  
strengthen the community. Take part in  
building the first world class museum  
and cultural center of its kind in  
America. Join and support the  
Groundbreaking Campaign by  
contributing today.

**DONATE YOUR \$10 TODAY**

**TEXT "MUSEUM" TO 20222  
OR VISIT JOINAAM.ORG**

MAILING ADDRESS: 104 NORTH BELMONT STREET, SUITE 205, GLENDALE, CA 91206  
The Armenian American Museum and Cultural Center of California is a 501(c)(3) non-profit organization.  
Your donation is tax-deductible allowed by law. Federal Tax ID: 47-2465341.

